

Ա. ԻՆՁԻԿՅԱՆ



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

LUSATSIKUS





Ա. ԻՆՑԻԿՑԱՆ

891.99.092 [Խաղաղական]

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1981 թ.

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԽԱՂԱՔԱՆ 65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Իմ մուսան մաղովուրդն է:
Բերանին

3647 A 6496



ՀԱՅԱՍՏԱՆԻ 1940 ԵՐԵՎԱՆ

А. ИНДИКЯН
АВЕТИК ИСААКЯН

Армгиз. Ереван, 1940 г.



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրական համաստեղության մշտավառ լուսատուներից է Ավետիք Իսահակյանը: Նա ներկայացուցիչն է այն փայլուն պլեադայի, որ հանդիսանում է մեր գեղարվեստական խոսքի անթառամ փառքը: Ապրելով և ստեղծագործելով մեր օրերում, նա այն ոսկի օդակն է, որ այսօրվա ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մեր գրականությունը կապում է մեր երկնադարամյա գրականությանն ու ողջ կուլտուրային:

Ավ. Իսահակյանը հայ ժողովրդի և նրա պատմության հարադարձ ճնունդն է: Եվ, ինչպես Վ. Գ. Բելինսկին էր Պուշկինի մասին ասում, նրա հանդես գալը բացատրվում է մեր գրականության պատմությամբ:

Իսահակյանը ժառանգել և իր ստեղծագործության մեջ զարգացրել է հայ գրականության լավագույն տրադիցիաները—ժողովրդայնությունն ու հայրենասիրությունը, բարձր արվեստն ու կուլտուրան:

Իր սիրո երգեր—վերքերով Իսահակյանը խոսում է միջնադարի մեր մեծ սիրերգուների՝ Մկ. Նաղաշի, Դր. Աղթամարցու և Քուչակի հետ:

Նա ժառանգել է Սայաթ-Նովայի սիրակեղ ու սիրահար սրտի կիրքն ու կրակը, Արովյանի վերքի

• մբմուռն ու հայրենասիրական հուրը, Դուրյանի սխ-
բատենչ սրտի վիշտն ու աղնիվ արտունջքը: Նրա
ստեղծագործությունը խոր արմատներով կապված է
հայ ժողովրդի կուլտուրայի և գրականության հարա-
զատ հողին: Իր ժողովրդայնությամբ և բարձր ար-
գեստով իսահակյանի ստեղծագործությունը հաղոր-
դակցվում է ընդհանուր գրականության լավագույն
ներկայացուցիչների հրաշակերտներին:

Իսահակյանի պողիան ներդաշնակ համադրու-
թյունն է Արևմուտքի և Արևելքի բանաստեղծական
լավագույն արագիցիաների: Նրա գրական ուսուցիչ-
ները և ուղեկիցները եղել են՝ Հայնեն ու Խայամը,
Գյոթեն ու Հաֆիզը, Լերմոնտովն ու Շեկինկոն:

Սակայն, Իսահակյանի ամենամեծ ուսուցիչը, նրա
ամենապորեղ ներշնչողը ժողովուրդն է եղել միշտ,
որին հավատարիմ է մնացել նա որպես պոետ: Իր լա-
վագույն հույզերով ու խոհերով միշտ եղել է ժողովրդի
հետ ու նրանով ապրել:

Սուլթանիզմի և ցարիզմի կրկնակի լծերի տակ հե-
ծող իր ժողովրդի վիշտը, անփոխադարձ և դժբախտ
ուրու վիշտը,—որ սոցիալական վշտի արտահայտու-
թյունն էր,—իսահակյանի ստեղծագործության մեջ
հանդես էր գալիս «համաշխարհային վշտի» կերպա-
րանքով.

Ո՞ւմ հետ եմ անհույս
Լալիս, հառաջում,
Ո՞ւմ ճակար վըրա
Իմ ձեռքն է հանդչում...

Լալիս է աշխարհն
Իմ սիրող գրկում,—

Համայն աշխարհի
Բախտն եմ ես սլդում...

Կաքելցությունն ու ջերմ սերը սոցիալական և
քաղաքական դաժան կարգեցի դոհեբի՝ «կյանքի խորթ
տղերքի», ընկածների և արհամարհվածների նկատ-
մամբ՝ հատկանշական է Ավետիք Իսահակյանի ստեղ-
ծագործությանը:

Իսահակյանը փիլիսոփիա բանաստեղծ է, ինչպես և
մեր ժողովուրդը: Նա սիրում, թախծում, հրճվում և
փիլիսոփայում է իր իմաստուն ժողովրդի պես:

Իր գգայական ու խոհական աշխարհով, իր սրտով
ու սիրով, իր ամբողջ եսով Իսահակյանը ձուլված է
ժողովրդին: Նա իր ջերմ ու զգայուն որտի ամբողջ
ուժով սիրում է ժողովրդին, սակայն, բնավ չէ իդեա-
լականացնում ժողովրդի տգիտությունը, հետամնացու-
թյունը: Ընդհակառակն նա մոլի թշնամի է խավա-
րի: Յարիզմի բանտային տիրապետության խավարում
նա ձգտել է արևին՝ լույսն ու աղատությունը համա-
րելով ամենալավ բաներն աշխարհում:

Դասակյանի հոռետեսությունը, որ բղխում եր նրա
սոցիալական վշտից, անհույս ու անհեռանկար չէր:
Նա սիրու և կյանքի խանդավառ գովերգուն է: Նրա
ամեն ինչ ժխտող Աբու-Լալա-Մահարին էլ ի վերջո
դեպի արևն է թռչում, որ կյանքի ու ամեն գոյության
մայր-արարիչն է: Զնայած երգել է մահն ու սիրո
ողբերգությունը, այնուամենայնիվ նա տվել է կյան-
քի և սիրու հաղթանակը մահվան վրա («Անանդան
ու մահը», «Հավերժական սերը»):

Ժողովրդային իր ոճով Իսահակյանն աղգակից է
Արովյանին:

Աբովյանով մեր գրականության պատմության մեջ բացվեց մի նոր սոսկեղար: Ժողովուրդը մտավ գրականության մեջ և գրականությունը՝ ժողովրդի: Խմելով ժողովրդի ստեղծագործության զովացուցիչ, կաղղության անմահական ակունքներից, մեր գրականությունը վերածնվեց, աճեց ու զարգացավ Դավթի նման: Եվ մեր գրականությունն այնուհետեւ իր հիմնական հոսանքով ընթացավ Աբովյանի բացած հունով:

Սակայն, Աբովյանական ուղղությունը հաղթանակ տարավ նախ և առաջ վեպում: Այս խնդրում Աբովյանն ունեցավ այնպիսի հետեւորդներ, ինչպես Դ. Աղայան և Պ. Պողոսյան:

Թեև Հովհ. Հովհաննիսյանն սկսեց, բայց Աբովյանական ուղղության հաղթանակը մեր պոեզիայում պատճեցին Հովհ. Թումանյանը և Ավ. Խսահակյանը:

Ժողովրդայնության հաղթանակը մեր գրականության և ապա՝ երաժշտության մեջ (Կոմիտաս, Ավ. Մելիքյան, Ռ. Մելիքյան) մի կողմից աղդային ինքնորշման, ազգային կուլտուրայի շեշտումն էր ընդդեմ ցարիզմի վարած ազգաջինջ քաղաքականության—փոքր ժողովուրդների նկատմամբ, մյուս կողմից այն խորտակում էր ազգային սահմանափակության չինական պարիսպները և մեր ժողովրդին կապում հարեանների հետ՝ դեմոկրատական-համամարդկային բարձր գաղափարներով:

Ավ. Խսահակյանը հարազատ է մեր նոր գրականության մեծ դրոշակակիրին նաև իր ստեղծագործական հոգեբանությամբ, իր սրտով ու սիրով, իր երգերով ու վերքերով:

Պոեզիայում Խսահ ակյանի անմիջական նախորդը մի կողմից Պ. Դուրյանն է, մյուս կողմից՝ Հովհ.

Հովհաննիսյանը: Վերջինիս ժողովրդային լիրիկայի գիծը զարգացնելով, Իսահակյանը գերազանցեց իր ուսուցչին՝ հասնելով գեղաբէստական և փիլիսոփայական խոշոր ընդհանրացումների:

Պ. Դուրյանի «տրաունջք»-ը՝ «Երկնքի հետ հպարա թշնամանքը» (Լերմոնտով) Իսահակյանի մոտ ավելի շեշտված և ավելի անմիջական հանդես եկավ իրբե թշնամանք երկրի հետ՝ ուղղված տիրող հասարակական-քաղաքական կարգերի դեմ: Իսահակյանը երկընքով չպրաղվեց էլ. երկինքը, Հայնեյի նման, թողեց թոշուններին ու հրեշտակներին: Սերն էլ սուրն էլ նա տեսավ երկրում և իր դայլույթի շանթերն ուղղեց իրական թշնամիների դեմ:

Իինելով ժողովրդի սբաի և մտքի հարազատ թարգմանը, Իսահակյանը, ինչպես յուրաքանչյուր մեծ ստեղծագործող, ինքնատիպ է: Նրա յուրաքանչյուր տողը, նույնիսկ սակավաթիվ թարգմանություններում, կրում է իսահակյանական գրողմ: Հենց ոկզրից ստեղծագործական եսը, բանաստեղծի իր ինքնությունն այնքան ուժեղ է եղել Իսահակյանի մեջ, որ անդամ պատահի՝ կուլ չի գնացել գրական ազդեցություններին: Հայնեյով ոգեսրվել է, բայց չի նմանվել, չի ձգնել նմանվելու:

Հայնէն, բողոքող, ըմբռոստ ու անհաշտ Հայնեն, այդ բանաստեղծ Պրոմեթեոսը իր հրաբխային տեմպերամենտով սիրելի ու հարազատ էր Իսահակյանին, նրա նույնպես անհանդիսա, նույնպես ըմբռոստ ու տնհաշտ նկարագրին: Հայնեն պատահի Իսահակյանին մի առ ժամանակ ուղեկցել է՝ իրբե նրա գրական մտերիմն ու հարազատը:

Այդ նույն հոգեկցությունն ու հարազատությունը

դիտելի է նաև Լեռմոնտովի և Իսահակյանի, ինչպես
և Շեկչենկոյի և Իսահակյանի միջև:

Իսահակյանը ստեղծագործական մեծ դիալագոն
ունի,—սոցիալական չարեքը, անհավասարությունը,
զբկողն ու զբկողը, ազգային ձնշումն ու աղատա-
մարտը, հայրենիքի ցավն ու սերը, սիրո վիշտն ու
վայելքը, կյանքի ու մահվան պրոբլեմը, ցավն ու
ծերությունը—մի խոսքով՝ մարդն իր բոլոր խոհերով
ու հույսերով Իսահակյանի ստեղծագործության ա-
ռարկան է:

Մեծ բանաստեղծի ստեղծագործական թոփչքը ար-
համարհում է ժամանակ և տաքածություն—Աղամէց և
Լիլիթից մինչև Ռոտա Կարոն, Շիրակի Ռհան ամուց
մինչև իտալացի Զիովաննին, Արագածից մինչև Հի-
մալայ, Ռւրաբառուի ժամանակներից մինչև սոցիալիս-
տական աղատ Հայաստանը. հնդկական Բուդդան, չի-
նական Լի—Թայի—Պոն, պարսկական Սաադին, հրեա-
կան Մովսեսը—մտնում են Իսահակյանի ընդդրկում-
ների մեջ:

Իսահակյանը խոշոր կուլտուրայի տեր ստեղծա-
գործող է: Նա սպունգի նման է ծծել անցյալի և իրեն
ժամանակի կուլտուրան—հին հունական և հռոմեա-
կան գրականությունն ու միֆոլոգիան. պարսկական
եպոսն ու պոեզիան. հնդկական միֆոլոգիան. գերմա-
նական, ֆրանսական, անգլիական, ռուսական ժո-
ղովուրդների գրականությունը, փիլիսոփիայությունն
ու պատմությունը: Նրա որոնող ու հետախույզ միաքը
զբաղվել է մարդաբանության, աստղաբաշխության,
բուսաբանության, լեզվաբանության և գիտության
այլ բնագավառների առաջադրած պրոբլեմներով:

Իսահակյանը մեր գեղարվեստական խոսքի մեծ
ուռուցիչներից և ստեղծովներից մեկն է։ Իր
գրական ուղեկիցների և գրչակիցների՝ Հովհա-
նիսյանի, Հովհաննի, Դ. Աղայանի, Դ. Վա-
րուժանի, Գր. Զոհրապի, Նար—Դոսի, Վ. Տերյանի հետ
միասին նա հրաշակերտել է մեր գրական խոսքը՝
հասցնելով այն գոհարակերտ բարձունքին, ուր մեր
գրականության մյուս գլուխազործոցների կողքին
գտնվում են «Երդեր ու վերքեր»-ը, «Լիլիթը», «Արու-
լալա-Մահարին», «Սամա Մհերը»։

Նա հայ լեզվին տիրում է այնպես, ինչպես անա-
պատի բեղվինը նետազեղին։ Իսահակյանի լեզուն
հարուստ է, բաղմածայն, բաղմածե ու բաղմածանը։
Լիդվի հարուստությամբ Իսահակյանն անգերազան-
ցելի է մեր բանաստեղծների մեջ։ Նրա լեզվական
լայնածիր ընդգրկումների մեջ մտնում է հայերենն իր
պատմության սկզբից մինչևօրս, աստվածաշնչի թարդ-
մանությունից մինչև մեր այսօրվա սոցիալիստական
հայերենը։

Իսահակյանի ստեղծագործությունը ճշմարիտ ար-
վեստի դրոշմն ունի իր վրա—սբուարուխ է, անկեղծ-
ու վարակիչ։ Երդերը առես պոկվում են նրա սրտից,
և մաքուր, ազնիվ և հուղիչ են, ինչպես ժողովրդա-
կան երգը, մայրական ջերմ խոսքը, մանկան վիշտն
ու հրճվանքը։

Իր բարձր արվեստով Իսահակյանի ստեղծագոր-
ծության նշանակությունը չի սահմանափակվում հայ
գրականության շրջանակներում։ Դեռևս 1916 թվին
ուրս նշանավոր բանաստեղծ Ա. Բլոկը գրում եր։
«Поэт Исаакян—первоклассный; может быть такого
го светлого и непосредственного таланта во всей
Европе нет».

Ժողովուրդների բանտ ցարական մոռասատանում
մեծ բանաստեղծը տասնյակ տարիներ երազել է ազատ
հայրենիքը:

Եվ եթե Խաչ. Արովյանը, Միք. Նալբանդյանը,
Դ. Աղայանը, Մուրացանը, Ծատուրյանը և մեր գրա-
կանության ու հասարակական-ուղեմոլրատական մտքի
լավագույն ներկայացուցիչները անմուրագ մեռան՝
ազատ հայրենիքի տեսչը սրտերում, ապա Խսահա-
կյանը բախտ ունեցավ տեսնելու հայ ժողովրդի ազա-
տագրումն ու քաղաքական վերածնունդը:

Եվ այսօր, իր սոցիալիստական ազատ հայրենի-
քում մեծ բանաստեղծը երախտագիտությամբ ու
ջերմ փայփայանքով գովերգում է ժողովուրդների մեծ
աղատարար ընկեր Ստալինին կերտում է առաջադեմ
և առաջավոր մարդկության հանճարեղ առաջնորդի՝
Լենինի հերոսական կերպարը:

I

Բանաստեղծը բնական և հասարակական կոնկրետ միջավայրի, պատմական որոշ պայմանների ծնունդ է: Առանց նրա կյանքը, միջավայրն ու պատմական պայմաններն իմանալու, դժվար է հասկանալ ու մեկնաբանել. նրա ստեղծագործությունը:

Արդ, ընդհանուր գծերով տեսնենք, թե ինչ ուղիներով է ընթացել Ավ. Իսահակյանի կյանքը:

Ավ. Իսահակյանը ճնվել է 1875 թվի հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական): Մանկությունն անցել է Ղազարապատ գյուղում, Մանթաշի երազաբույր և լուսափթիթ հովտում:

Մանուկ Իսահակյանը հաճախ եր գնում Արփաչայի ափի իրենց ջրաղացը, ուր հափշտակությամբ լսում էր ծեր ջրաղացպանի պատմած հեքիաթները, առասպելներն ու երգերը:

Հայաստանի բորբ արևը, Մանթաշի երփներանգ ծաղիկները, Արագածի աղամանդյա կատարին բեկվող կայծակնաթե թրերը, Արփաչայի շառաչը, նրա ջինջ ջրերի վրա թեքված հեղ ուսիները, ծերերի

հրաշապատում հեքիաթներն ու լեզենդները, աշուղչների թախծոս երգերն ու գեղջկուհիների զվարթ ջանգյուղումները վառեցին, բորբոքեցին նրա երեակայությունը՝ հետագայում գույն ու բույր տալով բանաստեղծի երգերին:

Գրել-կարդալն Իսահակյանը սովորում է իրենց գյուղում, մի գրագետ կնոջ մոտ, ապա ընդունվում է Ալեքսանդրապոլի հայոց հոգեոր դպրոցը: Այստեղ երկար չի մնում, որովհետեւ ցարական կառավարության հայահալած քաղաքականության հետևանքով փակում են հայկական դպրոցները: Այդ պատճառով էլ Իսահակյանը փոխադրվում է Ալեքսանդրապոլի սուսական դպրոցը:

1889 թ. Իսահակյանն ընդունվում է Գեորգյան ձեռարանը, Այստեղ ընթերցասիրությունը կիրք է դառնում նրա մեջ, և կարդում է, ավելի ճիշտ՝ կլանում է, ինչ որ ձեռքն ընկնում է:

Շատ բնորոշ է, որ Իսահակյանը դպրոցական հասակից խանգավառությամբ, հափշտակությամբ կարդում է մեր դեմոկրատական հեղինակների՝ Խ. Աբովյանի, Միք. Նալբանդյանի, Դ. Աղայանի, Պ. Պոռշյանի, Նար—Դոսի, Ծատուրյանի երկերը:

«12-13 տարեկան էի; երբ ձեռս անցավ «Սոս և Վարդեթեր» վեպը,—պատճում է բանաստեղծը: Այս տողերը գրելիս վերապրում եմ այն չքնաղ, հափշտակված հոգեվիճակը, որ կրում էի վեպի ընթերցման պահին:

Թառել էի Արփաչայի ափին՝ ջրերի վրա օրորվող ուռենու հաստ ճյուղերին և կլանում էի վեպի էջերը: Երջապատիս իրական աշխարհն այլափոխվել էր, մի

ուրիշ երկնքի արևն էր շողում գլխիս վերև, Թասականն
էր հոսում ոտներիս տակ, և Սոսի ու Վարդեթերի հետ
ըսնկված՝ թափառում էի Աշտարակի կախարդական
այգիներում։ Սիրտս թրթում էր նրանց զգացում-
ների հետ, արցունքներս թրջում էին սքանչելի վեպի
էջերը՝ դժբախտ սիրահարների վշտով համակված։

Դրանից հետո կարգացի «Կովածաղիկ» վեպը
նույն հափշտակությամբ։ Ի՞նչ խորհրդավոր, դյու-
թական աշխարհ էր պարում նա իմ մահուկ մտքի
տոջե։

Տասնեհինգ տարեկան հասակում դյուզում իստ-
հականի ձեռքն է ընկնում Խ. Աբովյանի «Վերք
Հայաստանի»-ն, որ, ինչպես ինքն է պատմում; կար-
դում է «հաց ու չուր մոռացած, հափշտակված, վե-
րացած։»

Այդ գրքերը պատահի Խստհակյանի մեջ վառում,
րորբռքում են սերը գեղի հայրենիքն ու ժողովուրդը,
դեպի «աշխարհի խորթ աղերքը», և զայրութ են
կուտակում դեպի ցարիզմն ու ամեն տեսակի ճնշում,
հարստահարություն։

«Եվ երբեք մենք չզգացինք վերը ու ողը, մենք
չտիրեցինք, մենք չընկացինք հայկական վշտով ու
վերքով, թեև լցվեցինք վրիժառությամբ, այլ սակայն
վերադանցապես վառվեցինք հայրենակերությամբ, ա-
րիությամբ, հերոսությամբ, մենք թիավորվեցինք
սպազայի շքեղ տեսիլներով։»

1892 թվին ճեմարանի վարչության դեմ ուղղված
աշակերտական ըմբոսա ելույթներին մասնակցելու
համար Խստհակյանը վտարվում է V դասարանից։

1893 թվին ուսումը շարունակելու համար ուղի-
վորվում է եվրոպա, նախա՝ Վիեննա, ուր վեց ամիս

մարդաբանական թանգարանում աշխատելուց հետո
անցնում է Լայպցիգ։ Այդտեղ աղասի ունկնդրում է
համալսարանի փիլիսոփայական և գրական ֆակուլ-
տետներում, ուր ուրիշ նշանավոր զիտնականների հետ
դասախոսություններ էին կարգում Վունդաը, Կ. Բյու-
լիները։ Հսում է դասախոսություններ նաև մարդաբա-
նական և աղջապըրական մասնաճյուղերում։

«Պատանի հասակիցս,—գրում է Խսահակյանը,—ինձ
մշտապես հուզել է, մտալլկել է աշխարքիս մեջ դո-
յություն ունեցող չարիքը, մարդկությունը ապա-
պեցնող չար իրերը—աղքատություն, տղիտություն,
բռնություն, շահագործում, ոճիրներ։ Ինձ տանջել է
հայ աշխատավոր ժողովրդի դասն վիճակը՝ սուլթանի
և ցարի դաժան լուծերու առկ, և այդ չարիքները վի-
րացնելու գործը, փրկության միջոցները»։

Նա երազել է մարդկության աղատագրումը սո-
ցիալական-դասակարգային կրկնակի ճնշումներից.
Երազել է «մի ներդաշնակ աշխարհ, ուր մարդը
լինի աղասի, չշահագործվի իր նոմանից, ապրի բախ-
տավոր, վերանան ոճիրները, սպանությունները, պա-
տերազմները»։

Եվ իր միտքը տանջող այդ հարցերի պատասխանը
գտնելու համար Խսահակյանը եվրոպայում կարդում
է Շոպենհաուերին, Նիցշեին, Հարտմանին, Հեգելին.
ուսումնասիրում է բուդդիզմը, հուգայիղմը, պարսկա-
կան Մաղդակը, Պլատոնին, Թոմաս Մորին, մեր թոնդ-
րակեցիներին և այլն, և այլն։

Փիլիսոփայությանը և պատմությանը զուգընթաց
Խսահակյանը կարգում և ուսումնասիրում է գերմա-
նական և ֆրանսական էպոսը—«Նիբելունգները» և
«Ռուլանդը», Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Բայրուի և

~~A 6496~~
Համաշխարհային գրականության մյուս կլասիկների
ստեղծագործությունները:

Լուրջ ընթերցանությունն ու համալսարանական
դասախոսություններն ավելի ու ավելի ընդլայնում
են նրա մտահորիզոնը, թոփչք հազորդում նրա մտքին
և երևակայությանը:

1895 թվին հանդամանքների բերումով Իսահա-
կյանը վերադառնում է հայրենիք, սակայն այստեղ
հակացարական գործունեության համար բանտարկ-
վում է: 1897 թվին բանտարկությունից ազատվելով
տպագրության է հանձնում բանաստեղծությունների
իր առաջին ժողովածուն «Երգեր ու վերքեր» խորա-
գրով, որ լույս է տեսնում 1898 թվի սկզբներին
Ալեքսանդրապոլում:

Ալ. Իսահակյանը բանաստեղծություններ սկսել է
գրել շատ վաղ, 11—12 տարեկան հասակից: Տպագրած
առաջին բանաստեղծությունը «Ծաղկեց էի նորարող-
րոջ...» վերնագրով լույս է տեսել «Տարադ» պատկե-
րագարդ հանդիսում, 1892 թվին:

Եվրոպայից նա աշխատակցում էր «Մուրճ» ամ-
սագրին իր սքանչելի ժողովրդական մոտենականությունով:
«Մայրիկիս», «Մածկալ ես, բեղարած ես...», «Դարդս
լացեք...» գեղեցիկ բանաստեղծությունները գրված են
կվրոպայում, 1893 թվին:

Գրական ասպարեզ իջնելու օրվանից Իսահակյանը
ձանաչվեց իբրև բանաստեղծ և սիրվեց աշխատավո-
րական լայն խավերի կողմից: Ժողովուրդը նրա մեջ
տեսավ իր վշտերի ու հույզերի հարազատ երգչին, սի-
րեց նրա բանաստեղծություններն իր ջանգյուղումների
և հոռովելների նման:

1898 թվին Խսահակյանը Շերվանդաղելի հետ մէջաւ
սին աքսորվում է Օգեստա մինչև 1899 թ.:

1900 թվին Խսահակյանը նորից անցնում է Ելրու-
պա գրականություն ուսումնասիրելու, բայց հիվան-
դության պատճառով ստիպված է լինում թողնել և
վերադառնալ: 1903 թ. Թիֆլիսում հրատարակում է
իր բանաստեղծությունների հրկրորդ ժողովածուն:

Այնուհետեւ սկսվում են թափառումների տարի-
ները. լինում է նորից Եվրոպայում, ապա Ռուսա-
տանում, Թյուրքիայում, Կովկասի զանազան մասե-
րում: Այդ թափառումների ժամանակ ուսումնասիրում
է երկիրը, ժողովուրդը, նրա տնտեսական, իրավական ու-
քաղաքական վիճակը: Եվ բանաստեղծը տեսնում է,
թե ժողովուրդն ինչպես է տառապում, հեծում թե
Սուլթանի, թե ցարի դաժան լծերի տակ:

Իմ մոր սուրբ խոսքը—ծաղրի նշավակ
Իմ հայրենիքը—սիրաս ու հոգիս—
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ...

Բանաստեղծի այդ շրջանի երգերը համակված են
հայրենիքի վշտով.

Ե՞՞ զավակ ձնշլած ու փոքրիկ ազգի,
Սրտիս արյունով մեծ վիշտս եմ զըռում.
Վերքը՝ անդարման իմ հայրենիքի
Իմ բյուր խոցոտված սրտումս եմ կըռում:

1908 թվին լույս է տեսնում «Երգեր և Վերքեր»-ը
Նոր հրատարակությամբ: Նույն թվին մի շարք հայ
գրողների և գիտնականների՝ Հովհաննեսի, Թումանյանի,
Դ. Աղայանի, Ստ. Մալխասյանի և ուրիշների հետ
բանաստեղծում է նաև Ալ. Խսահակյանը՝ մեղադրվելով
հակապետական գործունեության մէջ:

1909 թվից սեպտեմբերին, բանտարկությունից նոր աղատված, Թէֆլիսից Երևան՝ գալիս՝ զայրութով լցված գեղի ցարական ու բուրժուական դաման կարգերը՝ հղանում է «Արու-Լալա-Մահարի»-ն գրելու միտքը, որ իրազործում է նույն թվի հոկտեմբերին հայրենի Ղաղարապատ դյուզում:

Պոեմից հատվածներ լույս են տեսնում Գ. Լեվոնյանի «Գեղարվեստ» հանդիսում 1910 թվին։ Յարական գրաքննությունն արդելում է ամբողջը տպագրել։

1911 թվին ցարական կառավարությունը նորից հալածանք է սկսում հայ ինտելիգենցիայի դեմ։ Խառնականին այս անգամ հաջողվում է խուսափել ձերբակալությունից և փախչել արտասահման (կ. Պոլիս)։

1911 թվին կ. Պոլսում լույս է տեսնում ամբողջական «Արու-Լալա-Մահարի»-ն։ Այստեղ նա աշխատակցում է արևմտահայ թերթերին, տպագրելով բանաստեղծություններ, «Ազա Նաղար», «Ռոկի քաղաք» հեքյաթները և այլն։

1912 թվին նորից անցնում է Արևմտյան Եվրոպա։ Մինչև 1926 թիվը, մոտ տասնեհնգ տարի, տպարեր ժամանակներով լինում է Վիեննա, Ցյուրիխ, Բեռլին, Վենետիկ, Փընկ, Փարիզ։

Այդ ժամանակամիջոցում մի շաբաթ բանաստեղծություններով, հեքիաթներով, լեզենդներով, առակներով և պատմվածքներով աշխատակցում է գաղութահայ պարբերական հրատարակություններին։ Նրա այդ երկերը հետո լույս են տեսնում «Աշնան ծաղիկներ», «Հայրենի աղբյուրից», «Արձակ էջեր» հատընտեկերով։

1919 թվին Փընկում իսահակյանը գրում է իր նշանավոր «Սասմա Մհեր» վիպերգը, որ արդյունք է

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության աղղեցության: Վապերգը լույս է տեսնում 1922 թվական:

1926 թվին Ավ. Խոահակյանը գալիս է Սովետական Հայաստան, ուր հրճվանքով տեսնում է իր երբեմնի աղքատ, ավեր ու խալվար հայրենիքը վերածընված, վերաշխված։ Սովետական Հայաստանում լույս են տեսնում նրա «Լելիթ» արևելյան լիգենդների ժողովածուն (1927), «Համբերանքի չիրուխը» և «Ռւշինարան» (1929), ինչպես նաև «Բանաստեղծություններ» ժողովածուն (1930):

1930 թվին Խսահակյանը նորից գնում է Եվրոպա իր ընտանիքը, ձեռագրերը և գրադարանը տեղափոխելու և վերջնականապես Սովետական Հայաստանում հաստատվելու համար:

Եվրոպայում նա հանդես է գալիս որպես Սովետական Հայաստանի բարեկամը, որի համար ենթարկվում է դաշնակցականների հարձակումներին:

1932 թ. ապագրում է «Նրանք դրոշակ ունին», «Կարմածատերերից մոտ» պատմվածքները:

1936 թ. դեկտեմբերի սկզբներին վերապառնում է հայրենիք, գեղլի իր աղաս ու ստեղծագործ ժողովուրդը՝ նրա հետ մշասին մասնակից լինելու կոմունիստական հասարակարգի կառուցմանը, նրանով ներշնչվելու և նրա համար ստեղծագործելու:

Վերջին չորս-հինգ տարվա ընթացքում իսկական վերամշակեց և տպագրեց «Սամա Մհեր» պի-պերգը, զբեց մի շարք բանաստեղծություններ, բազմաթիվ հոդվածներ և. Աբովյանի, Պ. Պողյանի, Հովհ. Թումանյանի, Տերյանի, Պուշկինի, Շեկվենկոյի, Բ.

Խուսթավելու, մեր էպոսի և գրականության մասին։
1939 թ. հրատարակվեց Նրա ընտիր երկերի ժողովածուն երկու հատորով, որ մինչ այժմ եղածներից ամենահարուստն է։

Պիջնադարի մեր աշխարհիկ բանաստեղծները երգել են առավելապես սիրո վայելքը՝ երփներանգ գույշներով, արևելյան կրքով ու տարփանքով:

Սիրո այդ հույժ ունալիսատական, աշխարհիկ երգերն, ըստ էռլթյան ուղղված էին կրոնի և հոգևորականության դեմ, և այդ իմաստով պատմականհասարակական կարևոր նշանակություն ունեն, բացի գրականզգեղարվեստական այն բացառիկ արժեքից, որի մասին այնպիս հիացմունքով խոսել է Վ. Բրյուսովը:

Նահապետ Քուչակի, Նադաշ Հովնաթանի և ուրիշների տաղերում վայելքի երգերի կողքին հանդիպում ենք նաև սիրո վշտի տխուր նվազներին, որոնք, վերջի վերջո, նոր առաջացող բուրժուական հարաբերությունների՝ գյուղական հանապետական կենցաղի, վարք ու բարքի վրա ունեցած քայքայիչ ներգործության արդյունքն են: Հետաքրքրական է դիտել, որ նահ. Քուչակն իր տաղերից մեկում պատմում է «ձորով տարած, դրամով խաբած» յարի մասին և ավելցնում է՝

Սերն որ գրամով լինի, զինք էրել պիտի կրակոփ,

Բուրժուական կարգերի վաղ շրջանը Հայաստանում սկսում է XIII—XIV դ. դ., երբ առանձնապես կիլիկիայում, ծավալվում է առևտուրն ու քաղաքների դարգացումը: Նոր կարգերն իրենց հետ բերում են

նոր բարքեր։ «Մարդու շառը» ահսելի չափերի է հասնում, դրան ավելացրած՝ «Վաղիվսն ոչ դիտեմք թե զինչ ծնանի...»։

XVIII դարում, Բաղդասար Դավիրի և Սայաթ-Նովայի երգերում սիրո վայելքի տաղերին գերակշռում է անփոխաղարձ, դժբախտ սիրո վշտի երգը։ Այդ առանձնապես դիտելի է Սայաթ-Նովայի ստեղծագործություններում։

Աշխարս աշխարով կշացավ, ես քեզնից սով, աչկի լուս...

Մեր հանճարեղ բանաստեղծ—աշուղը, «խալիսի նոքար» Սայաթ-Նովան, հարկավ, սոսկ «զալում» յարի սիրո վիշտը չէր երգում։ Նրա խոցված սիրո վշտու երգերում արտահայտություն է գտել սոցիալական վիշտը, խալիսի վիշտը, որ այնպես գեղեցիկ դրսեվորվել է «Աշխարս մե փանջարա է» տաղում։

Պատկերների և գույների արևելյան երփներանդությամբ, խորունկ և անմիջական, վարակիչ հուզականությամբ, ջերմությամբ և անկեղծությամբ, խոր ժողովրդայնությամբ Ավ. Իսահակյանի երգերը համահնչուն են նահապետ Քուչակին և Սայաթ-Նովայի տաղերին։

Հովհ. Թումանյանի խոսքը Սայաթ-Նովայի մասին միանգամայն համապատասխանում է նաև Ավ. Իսահակյանին։

«Մի հոյակապ սիրահար է, բռնըված ու բոընկած սիրո հրգեհով, նրա լուսի տակ էլ նկատում է աշխարքն ու իրերը, զգում է, որ էրգում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու ան-

շառ, վեհ ու վսեմ, որպես աշխարքի ու մարդու մեծ
բարեկամը...» (ընդգծումն էմն է.—Ա. Ի.):

Իր սիրո երգերով իսահակյանն ավելի մոտ է Քու-
չակին ու Սայաթ-Նովազին, քան Խայամին, որ ջա-
նում էր «աշխարհի ցավը գինիի մեջ խեղդել»: Իսա-
հակյանը չեր կարող Խայամին հետևել որովհետեւ իր
զգայուն սրտի և ուղեղի բոլոր նյարդերով զգում էր
ժողովրդի ցավը: Նա երջանիկ չէր կարող լինել, երբ
շուրջը տեսնում էր՝ «լաց ու հեկեկանք, վիշտ ամե-
նուրեք»:

Սայաթ-Նովազի անփոխաղարձ սիրո վիշտը ող-
բերդություն է դառնում նախ Պ. Դուրյանի և ապա,
ավելի ցայտուն՝ Ավ. Իսահակյանի ստեղծագործու-
թյուններում: Ինչպես նկատեցինք, եթե մեր միջնա-
դարյան տաղերգուների համար սիրո վայելքի երգը
հենց մի օպպողեցէա էր տիրող կղերական-կրոնական
մտածողության ու մորալի դիմ, ապա անցյալ գարա-
վերջի և դարասկզբի հայ բանաստեղծների (Թուման-
յան, Իսահակյան, Տերյան) սիրո վիշտը, վերջի վեր-
ջո, սոցիալական-քաղաքական կարգերի նկատմամբ
նրանց դժգոհության արտահայտությունն էր, մի տե-
սակ «բունտ» ուղղված բուրժուական կարգերի և բար-
քերի դիմ: «Սիրային լիրիկան դառնում է ժամա-
նակի դիմ բարձրացած «բունտ»-ի արտահայտու-
թյուն», — զբում է Հայնեի հետազոտողներից մեկը
(Հեմմերման):

Պ. Ի. Պիսարել նույն առթեվ հետեյալ խնսո
կարեռը դիտողությունն է անում. «Հայնեն ինքը
հրաշալի հասկանում էր, կամ, ծայրահեղ դեպքում,
շատ ճիշտ կռահում իր ճակատագրական դժբախտու-
թյան խոկական պատճառը, որ, ինարկե, ոչինչ ընդ-

հանուր բան չուներ անձնական կորստի կամ այն հին պատմության հետ, թե նա սիրում էր նէրան (ee), իսկ նէ (она) նրան չէր սիրում»*):

Իսահակյանի սիրո վշտի թափանցիկ քողի տակ ակնհայտ կարելի է կարդալ նրա գժղոհությունը սոցալ'ական-քաղաքական կարգերից: «Դու չես հասկանա» բանաստեղծության մեջ իսահակյանը բացահայտում է իր վշտի քաղաքական հիմքը.

Զեմ տեսնում շքեղ զարդերը գարնան,
Վշտից խավարեց գոհարն աչքերիս.
Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա,
Զուը ես հարցնում պատճառը վշտիս:

Ես՝ զափակ ճնշված ու գժբախտ ազգի,
Որ արյունով է իր ուղին թրջում.
Որ գարելը, գարելը թափը իր բաղկի
Շղթան է կրծում ժանդու, շառաչուն:

Սիրել երազել թռչել եմ ուզում,
Բայց շղթան ինձ պինդ գամել է գետնին.
Կուս լուծը առզգիս՝ ուսերս է փշրում,
Զես կարող հասնել իմ անափ վշտին:

Մերս փաղաքշանքներն ու համբույրները չեն կարսութել սոցիալական դաժան կյանքի հասցըած հարվածների վերքերը: Եվ բանաստեղծը հայ է վանում սիրած աղջկա փաղաքշանքները,

Օ՛, մի արձակիր մազերդ շքեղ
Հնդնած, չարդված իմ կրծքի վրա...

Նույն վիշտն ունենալով, իսահակյանի հոգեկիցը՝
Հովհ. Թումանյանն էլ ետ էր վանում սերը.

*.) Писарев Д. И. „Литературно-критические статьи“ (избранные), 1939 г., „Генрих Гейне“, стр. 66.

... Եւ ոչ մի սեր ճար չի անի իմ դաբդեն.

Եվ կամ՝ Թու քո ճամբան գնա, քուրիկ,
Եվ թող լինի նա պայծառ.
Ինձ մի գթա, ինձ մի սիրի,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Անձնական երջանկությունը չէ՛ր իսահակյանի ու-
րոնածը, այլ ներդաշնակ հասարակարգն ու ընդհա-
նուրին բարորությունը, որով պայմանավորված է ան-
հատի երջանկությունը: Նյութական բարորությունը,
սիրո վայելքն ու փաղաքանքները չէին կարող բա-
վարարել բանաստեղծին և հագեցնել աղատության,
լավագույն կյանքի ու կարգի նրա տենչանքը: Եթե
նրան տային էլ Արագի ափին երազած բոստանը,
քողտիկն ու Շուշիկը, — նա իրեն երջանիկ համարել
չէր կարող: Նորից դժգոհ ու խոսվ, Մհերի նման,
պիտի թափառեր՝ ճշմարտությունը սրոնելու, և դար-
ձալ հանգիստ չպիտի գտներ՝ ինչքան թափառեր:
Արագին ափի քողտիկում էլ, Շուշիկի կողքին, աշխարհի
բոլոր ծայրերից նրան պիտի համեյին կյանքի խորթ
տղերքի լացն ու հեկեկանքը, և թշվառներին արցունք-
ները կաթիլ ու կաթիլ հավաքելով՝ պիտի թունավո-
րին սիրո վայելքի նրա սակավ վայրկյանները...

Այստեղից՝ միանգամայն անհիմն է քննադատնե-
րէց ոմանց կարծիքը, թե Իսահակյանի իդեալը Արա-
գի ափի բոստանն է: Արագի ափի իդիլիան Ավ. Իսա-
հակյանի սոցիալական օպողիցիայի սոսկ մի արտա-
հայտությունն է՝ հակադրված բուրժուական տոելի
կարգերին և իրականությանը:

Ուշագրավ է, որ Շեվչենկոն էլ երազել է Դնեպրի
ափին բարդիների հովանու տակ մի խրճիթ և խրճի-
թի մեջ՝ իր գեղեցիկ Օկոտնոչկային: Ինչ խոսք,

միամտություն կլիներ կարծել, թե Ուկրաինայի Պրո-
մեթեոսի խղեալը սահմանափակվում էր, ուրեմն, այդ-
պիսի մի եսական ու շատ նեղլիկ «դրախտով»: Մի
այլ բանաստեղծության մեջ, հնարավոր թյուրխու-
ցությունները կանխելու համար, Շեղչենկոն գրում է.
(բերում ենք մի հատված ազատ թարգմանությամբ):

«Զգիտեմ ինչու՝ գեղջուկի խրճիթը խաղաղ դրախտ
են կոչում. այդտեղ, այդ խրճիթում, տառապել եմ
և ես, այդտեղ մի ժամանակ թափվել են ևմ առաջին
արցունքները: Զգիտեմ՝ աստծու մոտ կդառնվի՞ այն-
պիսի չարեք, որ այդ խրճիթում չլինի... Սակայն՝
խրճիթը «դրախտ» են անվանում... Այդ խրճիթում ես
ոչ թե դրախտ ու բախտ, այլ դժոխք տեսա... Այդտեղ
հոգսը, կարիքը, անաղատությունն ու աշխատանքը
աղոթելու էլ չեն թողնում»:

* * *

Կլասիկ գրականության մեջ մենք չգիտենք մինչեւ
վերջ երջանիկ սիրո օրինակ, որովհետեւ դասակարգա-
յին հասարակությունը մարգուն լիակատար երջանիկ
դարձնելու անընդունակ է:

Սերն, ամենից առաջ, դասակարգային դաժան
կարգերի զոհն է: Իսահակյանն իր հերոսի՝ Օհան ա-
մու բերանով առում է. «Ամեն, ամեն գեշ բաների
պատճառը իմ ու քուն է: Գեղ ու քաղաք իրար դդում
են փողի, հարստության համար, ուրիշի աշխատանքը
տանելու համար: Ու քանի որ փող կա՝ մարդ չկա,
քանի որ իմ ու քու կա՝ սեր ու խիզճ չկա: Եղտեղից
էլ հարուստ ու աղքատ, զրկող ու զրկվող բանտ, ա-
րյուննեղություն: («Համբերանքի չիբուխը»):

Բուրժուական - դասակարգային հարաբերություններն են բաժանում սիրող զույգերին, և Իսահակյանի «Սէրեցի՝ յարս տարան...» բանաստեղծության մեջ այդ վիշտն է արտահայտված:

Վ. Տերյանը, որ Իսահակյանին հարազատ ու ներդաշնակ այնքան նվազներ ունի, նույնպես որոշակի բացահայտել է սէրո վշտը սոցիալական արմատը.

Ա'խ, սսկով են գնում քեզ,
Անհամ ցնորք իմ հոգու...

Կապիտալիստական հասարակարգն է, որ ստրկացրել է կնոջը, ենթարկել նրան իր շուկայական օրենքներին: Եթե կինը «խորամանկ, խարող» է, եթե նա «ծախսվում է», ապա այդ ոչ թե բղխում է կնոջ «առեղծվածային» էությունից, այլ պայմանավորված է հասարակության դասակարգային բնույթով: Դասակարգային հասարակության ոչնչացումը կաղատագրի և կնոջը, կփշրի նրա ստրուկության շղթաները: Հետեւալես, սիրո վշտի և ողբերգության արմատը գտնվում է կապիտալիզմի մեջ:

Ավ. Իսահակյանը պատահեկական շրջանի իր, թեև անարվեստ, բայց խորապես հուզական և սրտարուխ բանաստեղծություններից մեկում ասում է,

Այս աշխարհը սառն է, սառույց,
Զուրկ եմ սիրո արեից...

Սիրո նույն վիշտն է լալիս Հովհ. Թումանյանի գեղեցիկ լեզենդի հերոսուհին:

Հայրիկ, հայրիկ, միթե չըկա
իս աշխարքում անշեց հուր,
Թառամում է սիրուս ահա,
Պաղ է այս կյանքն ու տըխուր...

Արդ, ի՞նչ կոնկրետ բովանդակություն ուներ իսահակյանի սիրո իդեալը։ Նա ի՞նչպես էր ըմբռնում սերը, որ չէր գտնում, և ապա մեր բանաստեղծի սիրո իդեալն ի՞նչ չափով է բացահայտում նրա սոցիալական իդեալի բնույթը։

Լիլիթը իսահակյանի իդեալը չէ։

Զնայած լեգենդար, բիբլիական բնույթին, Լիլիթը սեալ կին է, տիպական ներկայացուցիչն այն կանանց, որոնց երրեմն սիրել սակայն, որոնցից հաճախ խարվել ու խոցվել է բանաստեղծը։

Իսահակյանի երազած «Հավերժական կինը» ավելի մոտ է Գյոթեի «Das Ewig—Weibliche»-ին, որ, ըստ Լունաչարսկու, գերմանացի մեծագույն պոետի «կրքով սիրած իդեալն է, յուրաքանչյուր մեծ նպատակի ընդհաննացումն առնասարակ...» («Դօկտօր Փայստ»)։

Իր երգեր-վերքերում Ավ. իսահակյանն ավելի որոշ է արտահայտել սիրո իր իդեալը. նախ և առաջ դա անձնուրաց, անձնագոհ սերն է, սերն անձնագոհություն է։

Ի՞նչ կա երկրում և՛ սըրազան, և՛ անդին,
Քան թե զոհվել քան թե լինել անձնվեր։

Առաջադիր խնդիրը լուսաբանելու տեսակետից շատ հետաքրքրական է «Անտուն գիշերներ» բանաստեղծության սկզբնական վարիանտը, որ բերում ենք ամբողջապես։

Անտուն գիշերներ,
Անքուն գիշերներ,

Քույրիկ, քեզ համար, քո սիրով այրված
Ես շատ անցրի, ես շատ տանջվեցի...
Բայց անդին քույրիկ, կյանքը հաճույք չէ,
Եվ այսուհետեւ այդպես սիրելու

Սիրաս սեր չունի,
Հոդիս երգ չունի
Ո՛չ, հավատա ինձ, այս սեր չէ երբեք,
Վերջ տուր ցնորքին, նայիր քո շուրջը—

Այնտեղ ձգտում կա,
Կոիվ ու քրտինք:

Սեր տուր ընկերիդ, որ ձգտեմ, կովեմ,
Սեր տուր եղբորդ, որ թափեմ քրտինք:
Զե՞ որ, քնույրիկ իմ, այդպիսի սիրով
Ապրում է երկինք, սիրում է երկինք,
Ինձ սիրիր այդպիս—երկնային սիրով—

Թռղ ձգտեմ, կովեմ
Թռղ թափեմ քրտինք*):

Հստ այդմ՝ իսահակյանը կնոջ սերը (անձնականը)
ոչ թե հակադրում է, այլ համազրում դեպի մարդիկ
ունեցած սիրուն, որովհետեւ, կրկնում ենք, անհատի
երջանկությունն անհրաժեշտաբար պայմանավորված
է կոլեկտիվի երջանկությամբ: Կնոջ սերը պիտի լի-
նի հասարակօգուտ գործունեության համար ներշնչ-
ման աղբյուր («սեր տուր ընկերիդ, որ ձգտեմ, կովեմ,
սեր տուր ընկերիդ, որ թափեմ քրտինք...»):

Այդպիս էր ըմբռնում սերը նաև XVIII դարի
ֆրանսական լուսավորիչ Հելվիցիուսը: Նա իր «Եր-
ջանկություն» փիլիսոփայական պոեմից վերջում հան-
գում է այն եղբակացության, թե անհատի շահերի
ճիշտ համազրումը հասարակականի հետ՝ սոցիալական
կարգերի վերակառուցման միջոցով՝ ապահովում է
անհատի երջանկությունը: Սիրո հարցն էլ նա լու-
ծում է ելնելով այս ըմբռնումից: Մերող աղջիկը՝

*) «Տարագ», 1893, № 32, էջ 536:

Նետղանիքն իր սիրտը բաց է անում հումանիզմի հաշմար և սիրած տղայից՝ էլեգորից պահանջում է չարի աստծու՝ Արիմանի ձեռից (==սոցիալական-քաղաքական ճնշումից) աղատել մարդկանց*):

Հետաքրքրական է դիտել, որ «Ձարհատ և Շիրին» աղբեկանական-ուղղեկալան լեզենդում անձնական սերն ու երջանկությունը կապակցվում է հասարակական բարորության հետ: Գեղեցկուհի Շիրինն իր սիրտն ու սերը խոստանում է նրան, ով ջրով կկենդանացնի կարծր անապատը, կվերացնի սովը՝ մարդկային թշվառության և ոճերների ակունքը:

Իր «Եղիթ Սարդար» պոեմում (1894) Ալ. Իսահակյանի հերոսուհին՝ Սանամը, սիրած տղային՝ Սարդարին գեղի մարտ է ճանապարհում՝ վաթանը պաշտպանելու, և հաղթական վերադարձից հետո է խոստանում իր սերը, որովհետեւ երջանիկ սերը ազատ հայրենիքումն է հնարավոր.

Երթան բարով, աղիղ յար ջան,
Անձարին չարա եղնիս,
Սուրբ յոթնանուն քեզ թուր ու թի,
Հետ դառնաս, մուրադի առնես**)

Այսպիսով, իսահակյանի ստեղծագործության մեջ կնոջ սերն ու անձնական երջանկությունն ստորադասված է հայրենիքի և ժողովրդի սիրուն, իսկ վերջինս էլ առընթեր է աղատության դաղափարին («Կյանքից թանգ բանը», «Հեր ջան, հայրենիք...», «Ա՛իս, երնել թե...», «Աղատության ջանդ», «Դու չես հասկանաш...»):

*) Гельвеций—«Счастье», песнь IV.

**) «Արտքու», 1894 դիրք, Ա., էջ 115—116:

Հայրենիքի և ժողովրդի սիրը գերակշռում է որպես կական սիրուն: Գուսլյար Միքայել իր չորս որդիներին ղոհաբերում է՝ բայց հրաժարվում է փառարանել իր հայրենիքի ու ժողովրդի դահճին («Ժողովրդի քնարը»):

Տարագիր լանաստեղծը սիրած կնոջ դրկումն էլ հայրենիքն է երաղել:

Գրկիր ինձ մեղմիկ,—
Քո կախարդ զրկում
Ես զգում եմ ինձ
Իմ հայրենիքում:

Եվ կամ՞ զարիր յարին աղջիկը կանչում է հայրենիքի կարուտով ու հրապույրով՝

Դարձի վաթան, հողն անուշ է,
Հողն անուշ է, ջուրն անուշ է...

Եվ եթե իսահակյանը երբեմն դառն խոսքեր է նետել հայրենիքին, ապա դա բուրժուադիայի հայրենիքին է վերաբերում, «որի հողն արնոտ՝ անդուլ հերկողը չոր քար է կրծում իր հացի կողքին»: Հայնի ջուլհակներն էլ եռակի անեծք էին հյուսում թաղավորի և հարուստների հայրենիքին:

* * *

Կարեկցությունը Ավ. Իսահակյանի երգած հիմնաւելան հույգերից մեկն է, և դա շատ բնորոշ է սիրուերգչի համար, որնվիհան «կարեկցությունը սիրո աղբյուրն է» («Բուղդան – թոչուն»): Դեպի թշվառ պարիսն տածած կարեկցությունից ծնվում է սերը, իսկ վերջինս մղում է դեպի անձնաղոնություն:

Եվ բնորոշ է, որ Իսահակյանի երգերում հաճախ սիրու և կարեկցության նվազները միանում են մի

ներդաշնակության մեջ, և դժվարանում ես որոշել՝
ոչը թե կարեկցություն է արտահայտվածը, թե և
մեկը, և' մյուսը միաժամանակ.

Միշտ զգում եմ ես, որ մի հետափոք,
Օտար աշխարհում ինձ պես վշտահաբ
Մի սիրտ է այրվում՝ անհայտ, մենավոր
Եվ երազում է, թախծում ինձ համար:

Եվ թվում է ինձ, որ սուրբ համբույրով
Ես փայփայում եմ ձեռները նրա.
Եվ գուրգուրում եմ, զգվում կարոտով՝
Քընքուշը զըլուխը իմ կրծքի վրա...

Բնորոշ է նաև, որ Խոահակյանն իր մի՛ շարք եր-
գերում սիրած աղջկանը «նազելի քույր», «նաղելի
ընկեր» է անվանում, ինչպես Սայաթ-Նովան՝ «ախ-
պեր» (հմմ. «Խոսկիրըդ մալում իմ արի...» տաղը):

Հետաքրքրական է դիտելը, որ ժողովուրդը յար-ը
դործածում է և՛ ընկերոջ, և՛ սիրածի առումով:

Հովհ. Թումանյանը Սայաթ-Նովայի՛ մասին գրած իր
նշանափոք հողվածներից մեկում («Սայաթ-Նովայի՛
երգերի ընավորությունը») այդ առթիվ նկատում է.

«...Եվ էդ զգացմունքները նրա երգերում մեծ մա-
սամբ արտահայտում են էնքան մեղմ ու անվրդով
խաղաղություն, որ նրա սերը նման է ընկերության,
ընկերությունը՝ սիրո։ Որ հայերենի քերականության
մեջ էլ արականի ու եգականի տարբերությունը
չկա, — Սայաթ-Նովայի՛ մի քանի՛ երգերում դժվար է
հատկանալ՝ իր ողերը ված խոսքով ում է դիմում նա, —
քնքուշ սիրով սիրած ընկերին, թե տարփալի սիրով
սիրած կնոջը»։

Այդ հանգամանքը թե Սայաթ-Նովայի՛ տաղերում,
թե Ավ. Խոահակյանի՛ երգերում բարձրացնում է կնոջ

մարդկային արժանապատվությունը: Դիրանով բանառ-
տեղծը կնոջ մեջ գնահատում է ոչ միայն կնոջականը,
այլև մարդկայինը, սիրո զգացմունքն աղատելով այն
տարփալի, պագչոտ, դուռ սեռական ըմբռնումը,
որ հիվանդագին չափերի էր հասնում դեկադանուի
գրականության ներկայացուցիչների մոտ:

*
* *

Ավ. Իսահակյանի սիրո իդեալին—անձնաղոն, կա-
րեկից, հումանիստական սիրուն իրական կյանքում
համապատասխանում էր միայն մայրական սերը, որ
բանաստեղծի ստեղծագործության մեջ եղել է իդեա-
կան և գեղարվեստական ներշնչումների հավերժահոս
ազդյուր:

Մայրն անձնաղոն սիրո, կարեկցության, հումա-
նիզմի կրողն է, սիմվոլը այն հումանիզմի, որ ըն-
դունակ է Մաքսիմ Գորկու գեղեցիկ հերոսի՝ Դանկո-
յի նման պատուի սեփական կուրծքը, դուրս կորցել
սիրու և այն ջահ ու զրոշ դարձած՝ լուսավորել ճա-
հիճներում և խափարում տառապող մարդկանց փրկու-
թյան ուղին...

Մայրն է հումանիզմի սերմերը ցանել բանաս-
տեղծի մեջ—կարեկցության, աղնվության, անձնա-
զոհության, ժողովրդասիրության վսիմ գաղափար-
ների սերմերը.

Զի՞ որ գու դրիր իմ մեջ քո հոգին
Եվ բարին սիրել ու աղնիվ լինել.
Գու վասիր իմ մեջ հուրը երկնային—
Գեղեցկի ծարավ, անհունի ձըգտում.
Կըսիվ չարի գեմ ու ընդդեմ սըտին,
Աղըիլ ու տանջվիլ ուրիշի սիրուն
Դու լցըիր իմ մեջ ծովի չափ մեծ սեր—
Այրվիս որ լույս տալ ամբոխի համար,

33

Բնկնիւ վութորկի, հըլաբուղիսի մեջ
Ամբոխի համար, աշխարհի համար...

Եվ կամ՝

«Ամենեն առաջ թող ինքը հասնի
Ամեն հիվանդի, հետու ճամբորդի,
Ամենեն հետո թող ինքը հասնի
Քեզ, իմ խեղճ որդի, իմ պահպուխտ որդի»:

Այս տողերը լավագույն ապացույցն են այն բանի
որ իսահակյանի երգած մայրական սերն ունի շատ
կոնկրետ բովանդակություն։ Դա ընդհանրապես մայր-
ական սերը չէ, —որովհետեւ բուրժուական-դասակար-
գային հասարակարգում այդ սրբադան զգացմունքն էլ
ենթարկվում է կապիտալիզմի շուկայի ապականիչ
աղդեցությանը, — դա աշխատավորուհու, գեղջուկունու
մայրական անապակ հույղն է։

Ավ. Իսահակյանի սիրոբնույթն ըմբռնելու տեսա-
կետից կարևոր է նշել, որ նա իր սիրատենչ և սիրա-
տանջ սերը համեմատում է մորը կորցրած մանկան
կարոտի ու վշտի հետ։

... Իմ խեղճ, իմ որբ սիրտ, ինչքան մորմոքես,
Ե՛լ քեզ գուրզուրող ու քեզ գուրզուրող
Ազիզ մեր չըկա,
Ու նանիկ ասող, որ անուշ քնիս...

Կամ թե՝ սիրադուրկ սիրտը նմանեցնում է հի-
վանդ մանկան, որ կարոտ է փայփայանքի ու գուր-
դուրանքի («Իմ սրտին», «Տարադ» 1901, № 29):

Իսահակյանի սիրո երգերի շարքում պետք է հի-
շատակել ընկերական սիրուն նվիրված երգերը՝ գըր-
ված մեծ մասամբ ստեղծագործության առաջին շրջա-
նում, որոնցից մի քանիսը հետագայում չի մտցրել
իր ժողովածուներում, ըստ երեւյթին համարելով
գեղարվեստական տեսակետից թույլ գործեր։ Սակայն,

թեև անարվեստ, բայց անկեղծ, հուզիչ ու անմիջական այդ երգերը ներդաշնակ են հնչում բանացտեղծի սիրո երգերի սիմֆոնիայում։

Սև ամպերին ամպ մ' էլ հասավ,
Ուսիները լուռ կուլան։

Ա՛խ, դարդերիս դարդ մ' էլ հասավ,—
Ո՞ւր ես, աղիզ ընկեր ջան։

Բանաստեղծի համար ընկերական սերն էլ ինչպես և սիրո ըուր մյուս տեսակները արժեքավոր է նրանով, որ իր մեջ կըում է սերը դեպի մարդիկ, դեպի «աշխարհի խորթ տղերքը», «խեղճերը»։

Էնոր դարդը, միս, մեր դարդն էր,—
Վախ, մեր սրտից էն գնաց,
Էնոր դարդը խեղճի դարդն էր,—
Խեղճի սրտից էն գնաց։

Ժխտելով բուրժուական աշխարհը, որ ամեն ինչի հետ սերն էլ առ ու ծախի առարկա էր, իսահակյանը հանգիստ ու ապաստան էր որոնում հովվական կյանքում («Ալադյազի մանիներ»): Հովվական պարդ կյանքն ու անապակ սիրո իդիլիան բանաստեղծը հակադրում էր բուրժուական աշխարհին, քաղքենիական կեղծ բարքերին և ծախվող սիրուն։ Նույն դիմը տեսնում ենք նաև վ., Տերյանի ստեղծագործության մեջ։

Եինեի չոքան սարերում հեռու,
Թայիր, անցնեիր վրանիս մոտով...
Կամ՝
Հովվիվներն աղատ հեռու սարերում...

Իսահակյանի, ինչպես և Տերյանի տեսչացած հովվական սերը քաղքենու հիվանդու, պադշատ սերը, սեռային մոլուցքը չե, այլ առողջ և միանդամայն

նորմալ սերը, որի մեջ աշխատանքի մոմենտն առաջնակարգ տեղն է դրավում.

Մաճկալ ես, բեզպած ես,
Առը շուռ տուր, տուն արի,
Ծովի պես քրտնած ես,
Եղներն արձկի, տուն արի:

... Դադրած, բեզպած յար ջան,
Ամպելն ելան, գե՞ն արի.
Բեզպած ջանիդ զուրբան,
Ծըտից թև առ, թեղ արի...

Արագի ափին տեհչացած բաստանում բանաստեղծը
երազում է «ծով քրտինք» թափել Շուշանի (սիրած
աղջկա) համար:

Եվ հովվական սիրո վայելքն էլ սիմվոլիզմի եր-
գած «շրթունքներն արյունոտով» համբույրների սե-
րը չէ.

... Ու համբուլեց ինձ մեղմով,
Այնպիս մեղմով, սիրով լի,
Ասես, գեմքիս վրայով
Սահեց թել բլբուլի...

Սակայն, իսահակյանի երգած հովվական սերը
նրա սիրո իդեալին է պատկանում, նրա ցնորքին,
որովհետեւ այն՝ իրականում գոյություն չուներ:

Եերը հովվական վրանի տակ, կամ Արագի քողով-
կում էլ թունավորվում էր կապիտալիզմի ապակա-
նիչ շնչից և սոցիալական չարիքը բանաստեղծի իդիւ-
լան էլ վերածում էր դժոխքի:

Եվ իսահակյանը, խոռված կյանքի փոթորիկնե-
րից, թողնելով Շուշիկի քողովիկն ու օջախը՝ դեպի բնու-
թյան փոթորիկն էր ձգտում, նրա որոտների մեջ իւլաց-

նելու սոցիալական փոթորկի ձայները («Զան, փոթորանքն է իմ աղիզ հարսը...»).

... А он, мятежный, просит бури,
Как будто в бурях есть покой!
(Лермонтов)

III

Կալածականի, անկայուն թափառականի անհանգիստ հոգեվիճակը իսահակյանի նախախորհրդային շրջանի ստեղծագործության հիմնական տրամադրություններից մեկն է, որ պայմանավորված էր նրա հասարակական իդեալի և բուրժուական իրականության բաղիսումով: Բանաստեղծը հասարակական հարմոնիայի էր ձգում, բայց ամենուրեք հանդիպում եր անհերդաշնակության, սոցիալական սուկալի կոնտրաստների:

Իսահակյանի այդ հոգեվիճակը նրա պոեզիայի մեջ արտահայտված է քարավանի պատկերով.

... Ղողանջն է միայն ձիգ քարավանի
Հեռավոր, անհայտ ճանապարհների
Հրապույրներով դյութում իմ հոգին
Թափառումների տեհուով անմեկին...

Լերմոնտովը, —որին հարազատ ու հոգեկից է իսահակյանն իր ստեղծագործության որոշ գծերով, —այդ

նույն հոգեվիճակն արտահայտել է, ինչպես հայտնի է, հալածական ամպերի պատկերով։ Նա իրեն համարում էր «թշնամական ուժից հալածված», իսկ այդ «թշնամական ուժը» նիկոլաևյան մարակի և բոռնցքի կարգերն էին, որ պատկերավոր ու հակիրճ Գերցենը բնութագրել է այսպես. «Խավարի և կամայականության, մունջ մահացման, անհետ կորստի, թաշկինակը բերանը խցած, տառապանքների թափավորություն»։

Իսահակյանին հալածողը նույն այդ ցարական կարգերն էին, ավելացրած նաև սուլթանական արյունոտ եաթաղանի ռեժիմը։

Ստեղծագործ անհատի և հասարակության բազմումը, որ արդյունք էր դասակարգային պայքարի, ավելի ցայտուն գծերով հանդես է եկել Մ. Գորկումեջ՝ նրա կյանքի և ստեղծագործության մինչ հեղափոխական շրջանում։ «Հենց որ ինձ մարդուն պատշաճ կերպարանք է արվել, ես ճշացել եմ... դա ատելության և բողոքի ճիշն էր», — գրում է Գորկին։

Թեև ոչ գորկիական թափով և հեղափոխական հետեղականությամբ, այնուամենայնիվ իսահակյանի ստեղծագործությունն իր հասարակական տենդենցներով վորոշ չափով ուղղված էր բուրժուական հասարակարգի և նրա քաղաքական հենարան ու գորավիդ՝ ցարիզմի դեմ։

Կապիտալիստական աշխարհի քողազերծումն ու ժխտումն իսահակյանը ուժեղ պաֆոսով տվել է իր նշանավոր «Աբու-Լալա-Մահարի» պոեմում։ Բանատեղծը քողազերծ է անում բուրժուական հանրակարգի բոլոր ատրիբուդները—ընտանիք, սեփականությունն, պետությունն, կենցաղ, կրոն, հողերանություն—կա-

սղիտալիղմի տնտեսական և իրավաքաղաքական հարաբերությունները—բազիսն ու վերնաշենքը.

Ի՞նչ է պատիվը, հարդանքը մարդկանց.—սոսկ ոսկուց, վախից
հարդ են մատուցում...
եվ ինչ է գանձը, որով հիմարը աիրում է մարդկանց, և՝ հանճար
և սեր,—

Բյուրավորների քամված արյունը, մեռեների միս, որը
արցունքների:

...Ապիրատ աշխարհ, որ հզոր սոկին դարձնում է գողին՝ ազնիվ,
բարեհույս:

Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տգեղին՝ չքնաղ, և
պունիկին՝ կույս:

Կապիտալիստական աշխարհի այս ձաղկումն ու
ժխտումը իսահակյանի պոեմում անհատական «բուն-
ուկ» կերպարանքով է արտահայտված:

«Անծայր աշխարհի բոլոր ծայրերից, բոլոր խոր-
շերից» բանաստեղծի զգայուն սրտում կուտակված
արցունքները փոխարիվելով ցանման ու բողոքի՝ այդ
պոեմում զուրս են ժայթքել՝ հրաբխային ուժդնու-
թյամբ...

Փխտելով կապիտալիստական աշխարհը, ճիշտ է,
իսահակյանը նրան չնակաղրեց մի կոնկրետ հանրա-
կարդ, բայց նրա ժխտումն անհետանկար չէր, այլ իր
մեջ կրում էր լավագույն տաղաղայի, թեև անորոշ և
ծշուշային, ակնկալումը՝ արտահայտված արեի սիմ-
վոլիկ պատկերով:

Անհատի և հաստրակության հակառակությունը բուր-
ժուական հանրակարդում, աշխատանքի և կապիտալի
հակասությունների ընդհանուր շղթայի մի օղակն է:

«Մարդն աղատ է ծնվում, բայց ամենուրեք շղթաների մեջ է», — դրում էր դեռևս Փ. Փ. Ռուսոսն:

Անհատի ձերբազատության պահանջը, որ այնպես ուժգին բարձրացնում էր իսահակյանը, ուղղված եր նույնպես կապիտալիզմի դեմ, որ կաշկանդում, շղթայում էր մարդու աղատությունը, վիշրում ստեղծագործողի թի ու թոփչը: Կապիտալիստական աշխարհը իսահակյանի համար «անդուռ ու անել վանդակ» էր, յ «քարե դնդան», «ահավոր ջեհնեմ»:

Իսահակյանն իր խոսքի կրակն ուղղել էր «գիշակեր բուրժու աղիայի, անգրագետ ինտելիգենցիայի և այլառեալած ուսունողության» դեմ, նաև մանր-բուրժուական, քաղքենիսական այն ճղճիմ ճահճի, հոգեկան այն նեխվածության և թշվառության դեմ, որ շրջապատում էր նրան:

Մեր բանաստեղծի «անհատական լունդը» ոչ մի առնչություն չունի XIX դարեկերջի գեկապենատական ինդեպիդուալիզմի հետ, որ սադիստական վայրագ հաճառույթներ էր որոնում և հասարակական ակտիվությունն սպանող ապատիա:

Իսահակյանի արհամարհական վերաբերմունքը պաշտոնական հասարակությանն է ուղղված եղել, — ինչպես Պուշկինի և Լերմոնտովի մոտ, — և ոչ ժողովրդի, որին սիրում էր նա և որի հարազատ զավակն է ինքը՝ որպես մարդ և որպես ստեղծագործող:

Անաղատ անհատի, կեղեքվող դասակարգերի, ձնշված ու հալածված ժողովրդի վիշտն է միշտ խոռվել իսահակյանի միտքը, հուղել նրա սիրուլ և դայրույթի շանթեր արձակել նրա դրչից:

Սակայն, իսահակյանը ղերծ չէր հակասություններից: Նրա մեջ առկա էր Ֆառևստի երկվությունը—մի կողմից կյանքի և երջանկության անհաջուրդ ծարագն ու տենչը և ձգտումը կեցության նմբ, լավագույն ձեւերի, մյուս կողմից՝ հասարակական իդեալի որոնումներից հուսահատ՝ կյանքի ժխտումը, մոայլ նիշիլիզմը, մոռանալու և «վայելքի վայրկյանը բըռնելու» Մեֆիստօֆելյան հրապույրը... Սակայն, նրա մեջ շատ զորեղ եր հասարակական վիշտը, որ կարողանար այն խեղդել գինու և կնոջական թովչանքի մեջ:

Ավ. Իսահակյանի ^ա հուեանությունն ընդհանուր, վերացական բնույթ չէր կրում, այլ ուներ շատ կոնկրետ բովանդակություն: Նրա պեսսիմիզմի ակունքները գտնվում էին սոցիալական անտագոնիստական կարգերում, որոնց մեջ նա գոհ ու երջանիկ լինել չէր կարող: Նա գիտեր կյանքի հմայքն ու հրապույրը, բայց տեսնում էր, որ հասարակական հոռի կարգերը դարձնում են այն «ահավոր ջեննեմ» (զժոխք):

Մ. Գորկին Լերմոնտովի հուեանությունը համարում եր շատ իրական զգացմունք. «Այդ հուեանության մեջ պարզ հնչում է ատելություն ժամանակակից հասարակության նկատմամբ, նրա (այդ հասարակության—Ա. Ի.) ժխտումը, պայքարի ծարավ ու վիշտ, և հուսահատություն՝ միայնության, անզորության գիտակցումից: Նրա հուեանությունն ամբողջապես ուղղված է աշխարհիկ հասարակության դեմ»*):

*.) «Временник Пушкинской комиссии». — 1937, № 3, стр. 278.

Իսահակյանի հասարակական վշտի մռայլ սավերը
ընկնում էր նաև բնության վրա: Եթե Գյոթեն բնու-
թյունը համարում էր ներդաշն ու միասնական մի
ամբողջություն, և հասարակական կյանքում ներդաշ-
նակություն չգտնելով, մահը համարում էր այն ճա-
նապարհը, որ նրան պիտի միացներ բնությունն ու
հավերժությունը, ապա իսահակյանը բնության մեջ
հանգիստ ու հարմոնիա չէր տեսնում և ժխտում էր
մահը, համարելով այն մեծագույն չարիք, չարիքի
անսպառ աղբյուր, թշնամական, դեմոնական մի ուժ,
որ ոչնչացման է հանգեցնում ամեն գոյություն:
Բնությունը նա տեսնում էր լցված կյանքի ու մահի
դաժան պայքարով, ուր ամեն գոյակ, ինչպես և
մարդը թպրառում է տառապանքի և մահվան ճան-
կերում:

Կրկնում ենք, իսահակյանի անբավականությունն
ու հոգեկան անձուկը արդյունք չէր անձնական ձա-
խորդության (անհաջող ոեր): Նրան խեղդելու չափ
ծանը էր շնչելը բուրժուական վայրագ կարգերի ու
բարքերի կապարյա մթնոլորտում: Նրան ճնշում էին
սոցիալական-քաղաքական դաժան կարգերը, այլապես
ներդաշնակ աշխարհում, նա կարող էր,—ինչպես Համ-
լետն է ասում,—«ընկույզի կեղեկի մեջ էլ իրեն լավ
զգալ»:

Իսահակյանը շատ խորն էր զգում սոցիալական
կյանքի ահավոր հակասությունները, բուրժուական-
ցարական վայրենի իրականությունը, որ այնպես
ուժգին բաղխվում էր նրա հասարակական իդեալին՝
երջանկության, սիրո ու ներդաշնակության անհա-
գուրդ տենչանքին:

Նա լավ էր ըմբռնում, որ դասակարգային հասարակության մեջ՝

Մուրճ կամ զնդան պիտի լինիս,
Ճշմարտություն չկա ուրիշ...

Սակայն, սոցիալական հակասությունները նա այն ժամանակ չէր դիտում հեղափոխական պրոլետարիատի տեսանկյունից:

Ընկ. Դիմիտրովը ույլաստագի հրկիզման գործի դատավարության ժամանակ արտասանած իր համարձակ ճառում մեջ բերելով Գյոթեյի «Իշխիր կամ հնագանդվիր»... բանաստեղծության տողերն, ասաց. «Այս, ով չի ուզում զնդան լինել, նա պետք է մուրճ լինի»:

Իսահակյանը ձգտում եր ձերբադատվել բուրժուական հասարակության կապանքներից, արյունախում ցարիզմից, նա երազում էր նոր, լավագույն հասարակական կարգեր: Բայց ի՞նչպես կործանել հին աշխարհը և կառուցել նորը՝ այս էր խնդիրը:

Սբու-Լալա-Մահարիի թոփչքը դեպի «աղատության թագավորությունը» (նրա սիմվոլի համաձայն՝ դեպի արևը), կաշկանդված էր նույն այդ կապիտալիզմի՝ «անհրաժեշտության թագավորության», շղթաներով, և կապված չլինելով միակ հետեղական հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի բախտին ու պայքարին՝ դատապարտված էր անհաջողության:

Նեկավարվելով մեր հանճարեղ ուսուցչի Վ. Ի. Լենինի մեթոդով, որով նա արժեքավորում է Հ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունը, կարելի է ասել, որ Իսահակյանի հակասությունները նրա անձնական հակասությունները չեն, այլ արտահայտությունն այն ծայրահեղորհն բարդ, հակասական տրադիցիաների,

որոնք բնորոշում էին նրան շրջապատող հասարակության զանազան դասակարգերի և զանազան խավերի, և առաջին հերթին մինչեղափոխական Հայաստանի ազգարնակության հիմնական զանգվածը կազմող գյուղացիության աշխարհայացքն ու հոգերանությունը:

Ավ. Խսահակյանն իր ստեղծագործության և աշխարհայացքի խոր արժատներով կապված լինելով ժողովրդի հետ, «բյուր-բյուր ճամբեքով» ճշմարտությունը որոնելուց հետո հանգեց սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի ձանաշմանը:

Նրա քաղաքական և ստեղծագործական զարգացման այդ ձանապահն ըմբռնելու տեսակետից շատ բնորոշ են «Աղատության Զանդ» և «Անհուն վրեժի և ատելության...» բանաստեղծությունները: Առաջինը գրված է 1903 թ. հայկական դպրոցները փակելու և եկեղեցական կալվածները գրավելու առթիվ տեղի ունեցած ցույցերի և հակացարական տրամադրությունների ժամանակ, իսկ երկրորդը 1905 թ. հեղափոխության շրջանում:

Բանաստեղծը կովկասի ժողովուրդներին միացման և ապստամբության կոչ էր անում «ընդդեմ բռնության, ամբարիշտ Զարի» (=Յարի):

Աղատության Զանդ, զու վեհ զողանչէ
Կովկասյան վսնմ, վնս ըարձունքներից,
Ինչպես մըրըիկ շաշե, շառաչե,
Մինչև սիդապանծ աղատն Մասիս

Եվ բավական է՝ անարդ լծի տակ
Մենք ստրուկ մնանք՝ ձեռներս շըդթա.
Դասլանք փշըկու մեզ թնւյն ու կըրակ,
Մեղուժ և կրով, վըրէժ որստա՛.

...եվ աղասության նորոգ արեի
Ասկի ներբողը, Զանգ, զըվարթ հընչե,
Բյուը գագաթներից աղատ կովկասի
Սուբբ եղբայրության տոնին մեղ կանչե:

Այս բանաստեղծությունները, —որոնց մեջ արտահայտված է աղգային և ոոցիալական-դասակարգակին ձնշումներից աղատագրվելու և ապստամբության կոչ, ինչպես նաև ժողովուրդների եղբայրության դաղափարը, —նշանակալից տեղ ունեն ոչ միայն իսահակյանի ստեղծագործության, այլև մեր ամբողջ գրականության մեջ:

Հատկանշական է, որ սուսական առաջին հեղափոխության շրջանում իր բանաստեղծական պատկերացումների մեջ իսահակյանն իրեն համարում էր քաղաքական պայքարի զոհ («Լեռների լանջում...», «Հոգիս մոայլ էր...»): Այս կողմով ևս իսահակյանը հարազատ է Լերմոնտովին, որ նույնպես իրեն պատկերացնում էր իրրե զոհ ընկած հանուն հայրենիքի և աղատության *):

Վերևում ասացինք, թե իսահակյանի համար կնոջ սերը ստորագաս է հայրենիքի և ժողովրդի սիրուն: Այդ տեսակետից շատ բնորոշ է «Լեռների լանջում...» բանաստեղծությունը՝ գրված 1906 թ., հեղափոխության շրջանում:

Եթե Շուշան յարի սերն անկարող է լինում բարձրացնել «գերեզմանի մութ խորքում» քնած բանաստեղծին (տես «Ժեռ, մե քարը սրտիս վրա...» բա-

*) Кирпотин, — „Политические мотивы в творчестве Лермонтова“, 1940, стр. 72—73.

նաստեղծությունը), ապա «մարտահրավերը մեծ տկառության» կենդանացնում է «մեռած, մոռացված» պոետին («կեռների լանջում...»):

Իսահակյանի ստեղծագործության համար շատ բնորոշ այս բանաստեղծությունը բերում ենք ամբողջովին.

Լեռների լանջում, ծանըը հողի տակ
ես թաղված էի՝ մեռած, մոռացված.
Ու վաղուց, վաղուց, անհայտ, լուս, մենակ
ես նընջում էի հոգուս մեջ սուզված,
եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից
Մարտահրավերը վեճ ազատության,
Հմբոստ ամբոխի ձայնը մըրկալից,
Երգեր մարտական, շեփոր ռազմական
Վառ դրոշակի խրոխտ ծածանում,
Զենքի շառաչյուն, ձիերի դոփյուն,
Քայլեր առնական
Հողիս մոտեցան,
Եվ դողաց ահա,
Եվ թեթևաց
Հողը իմ վըրա.
Եվ սիրալս լցվեց այրվող արյունով,
Ուզեցի ելներ, նժույդն ամենի
Խթաներ, թըռներ, շառաչել զենքով,
Կըռվել ու մեռնել դաշտերում ռազմի...

Նման տրամադրություն արտահայտված է նաև «Մոայլ ամպերից, հըզոր կայծակով...» բանաստեղծության մեջ՝ գրված 1904 թվին:

Ավ. Իսահակյանի այդ բանաստեղծությունների քաղաքական ազատարարակ ու մարտակոչ տրամադրությունները գալիս, հանգում են «Սասմա Մհեր»-ին,

որ դառել է մեր բանաստեղծի խղեական հաճգուցակետը:

Մեր ժողովրդական էպոսի այդ իմաստուն և ըմբռուտ դյուցազունն Ավ. Խաչակյանին հետաքրքրել է վաղուց (1902 թվից սկսած) և երկար տարիներ ստեղծագործական մտորումների նյութ է եղել, բայց գեղարվեստական ձև ու մարմին է ստացել Հոկտեմբերյան Հեղափոխության ազդեցության տակ:

Ենելով ժողովրդական էպոսի վարիանտներից, Ավ. Խսահակյանը, մեծ ստեղծագործողի վարպետությամբ, իր վիպերգում կերտել-պատկերել է հայ ժողովրդի պայքարն իրեն ճնշողների գեմ, և գեղարվեստորեն բացահայտել է միջնադարի հայ աշխատավոր մասսաների լավագույն դադափարները և տենչերը:

Սոցիալական անարդարության, չարիքի դեմ ընդվզող, որոնող ու թափառական Մհերն իր «բնութք»-ով հարազատ է նրա ստեղծագործողին:

Մանկուց որր, «զուրկ ու մերկ, ծարավ, անոթի ու վտարանդի» Մհերն իր թափառումների ժամանակականատես է լինում ճնշումներին ու շահագործմանը: Նրա հոգում ամեն անգամ կուտակվում է «կրակ ու բաց» և նա խոր զայրույթով է լցվում դեպի տիրողները, ճնշողներն ու հարստահարողները: Ըմբռուտանում է նա դաժան կարգերի ու տիրողների դեմ և բոլոր ուամիկներին պայքարի է կոչում:

Ենենք գուպար

Աշխարքի դեմ զրկող ու չար.

Ողջ ավերենք

Ու ուամկություն բերենք աշխարհ,

Ուամկի օրենք ու իրավունք,

Ու տէր դառնա ուամիկն իրեն

Սուրբ վաստակին, արդար հացին:

Իսահակյանի Մհերը մի կուռ ու ամբողջական կերպար է՝ քանդակված «կայծակ քարով ու որձքարով», ինչպես «Մհերի Քեն»-ը:

Ժողովրդական վարիանտների համեմատությամբ Իսահակյանը մի հիմնական հավելում է կատարել բովանդակության խմաստով (վերջերդ): Ժողովրդական վարիանտների համաձայն Մհերը քարանձափից դուրս չի գալիս. նա դուրս է գալու այն ժամանակ, երբ ցորենի հատիկը մասուրի մեծության լինի, կամ՝ երբ «ուամկություն» լինի աշխարհում:

Իսահակյանը Մհերին դուրս է բերում քարանձափից, դրանով նա շեղվում է էպոսից, բայց հավատաբիմ է մնում պատմությանը:

Հայ ժողովուրդը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության շնորհիվ դուրս ելալ ցարիզմի ու կապիտալիզմի խավար բանախց:

Մհերը, որ հայ ժողովրդի սիմվոլն է, չէր կարող մնալ քարանձափում:

Եվ ժողովրդական բանաստեղծը Մհերին դուրս բերելով իր գարավոր զնդանից, միացնում է աղատության, «ուամկի օրենք ու լրավունքի» համար պայքարող միլիոնների մեծ բանակին:

Մհերը հաղթում է՝ միացած մասսաների երթին ու պայքարին:

Այդպես է Իսահակյանն ավարտում իր վիպերգը: Եվ դա՝ հայ ժողովրդի աղատադրության պատմական փաստի գեղարվեստական մեծարվեստ ընդհանրացումն է մեր գրականության մեջ:

IV

Ավ. Իսահակյանի արվեստը ժողովրդային է իր
ոլով ու ոճով, իր ձևով ու բովանդակությամբ։ Մեծ
բանաստեղծն իր երգերում զբել է ժողովրդի սիրով
բարխուն իր սիրութ։ Նա երգում է այնպիս, ինչ-
պես բանաստեղծ ժողովուրդը՝ կերպեր՝ անձնավորված
մի անհատի մեջ։ | Եվ միանդամայն հասկանալի է,
երբ ժողովուրդը բանաստեղծի երգերից շատերը հա-
մարում է իր սեփական ստեղծագործությունները։

) Պարզությունը, անմիջականությունը, հուզակա-
նությունը, երաժշտականությունը կազմում են իսա-
հակյանի երգերի արժանիքները։ | Գրակայնությունը
չի մատնում, զգալ չի տալիս իրեն։ Իսահակյանի,
ինչպես և Հովհաննես, Թումանյանի երգերը կտրծեն թարմ
օգում, բնության մեջ լինեն գրված—շնչում են բնու-
թյան թարմությամբ և ազատությամբ։

Իսահակյանի ստեղծագործության մեջ մենք տես-
նում ենք հայ ժողովրդական երգի բոլոր առանձնա-
հատկությունները։

Այդ առանձնահատկություններից մեկը բանաս-
տեղծական գուգաղրությունն է (պարակելիքմ) և հա-
կադրությունը։

Մի գեղքում բանաստեղծն իր հոգեվիճակի միջով
է զիտում բնությունը՝ նբան հաղորդելով իր սեփա-
կան արամաղրությունը։

Կաթիլ-կաթիլ ամողն է ցողում
Սև ու պղտոր երկնքեն.
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում
Իմ անդյուման, ուկ' սրաեն:

Երկըորդ դեպքում պայծու պեյզաժի ֆոնի վրա
բանաստեղծը բաց է անում իր ներաշխարհը, իր
մոայլ հոգեվիճակը հակադրելով բնության ուայծա-
ռությանը, վայելքին ու հավերժությանը.

Առավոտուն ծով ճաճանչում
Արտուրն ուրախ ճախրում է վեր.
Ցավ ու խավար չի ճաճաչում՝
Երգում է լույս, երգում է սեր:

Իսկ իմ սիրտը տիսուր ու սե՛
Շուրջը՝ ավեր ու ցավեր.
Եվ իմ վշտոտ զիսի վերե
Արտուրն ուրախ երգում է սեր...

Իսահակյանի լիրիկայի երկըորդ առանձնահատու-
կությունը, որով նա նույնպես հարազատ է ժողովուրդ-
ստեղծագործողին, բնության շնչավորումն է: Ժողո-
վուրդն իր հուզյերը, և առանձնապես վիշտն ու ցավին
արտահայտելիս դիմում է բնությանը, խոսում նրա
հետ, նրան ընկերակից, իր վշտին բաժանորդ դարձ-
նում, որովհետև մենակ ծանր է վիշտ կրելը: Այդ դի-
տելի է ոչ միայն ժողովրդական երգերում, այլ և
նրանցից զրականությանն անցած լինելով, մեր գրող-
ների մոտ. օրինակ՝ Ռաֆֆու «Զայն տուր, ով ծո-
վակ...» և Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուրը»,
Պ. Դուրյանի «Լճակը», Հովհ. Թումանյանի «Անուշ»-ից
Սարոյի երգը՝ «Բարձր սարեր...», «Հառաչանք»-ի
նախերդանքը («Լեռներ, ներշնչված դար-

ձյալ ձեզանով...») և այլն: Օրինակները բազմաթիվ
են: Ցայտուն նմուշներ ունի նաև Ավ. Իսահակյանը՝
«Դարդու լացեք, սարի սմբուլ...», «Սեմութ ամպեր
ճակտիդ դիզվան...», «Հոգնած իմ, անտառ...» և այլն:

Բնության շնչափորսումն Ավ. Իսահակյանի ստեղ-
ծագործության մեջ արտահայտվում է նաև այն դեկ-
քում, երբ նա խոհ ու հույզ է վերագրում նրան:

Ամեն դիշեր իմ պարտիզում
Լալկան ուսին, հեղ ուսին,
Վշտատոչոր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուսին:

Եվ սըբբում է առավոտու
Կույս արել նազելի
Հուը ծամերով հեգ ուսենու
Արցունքները բյուրեղի...

Իսահակյանի երգերը ժողովրդականին մոտեցնող
մի երրորդ առանձնահատկությունն էլ դիալոգն է:
Հաբրբանը, բազմաթիվ ժողովրդական երգեր և ջան-
դյուլումներ կառուցված են դիալոգի վրա: Իսահա-
կյանից հիշատակենք նշանավոր «Սիրուն աղջիկ, եր-
կինք լինեմ...», «Էղ ի՞նչ կրակ կանես, մերիկ...»,
«Մայրիկ, նայիր, արեն ի՞նչպես...» բանաստեղծու-
թյունները:

Չորրորդ առանձնահատկությունը, որ Իսահակյանի
լիբեկան հարազատ է գարձնում ժողովրդական երգին,
հակիրճությունն է:

Մ. Գորկին իր հիշողությունների մեջ պատմում
է, թե Լ. Ն. Տոլստոյը ուսւ ժողովրդական երգերի
մասին խոսելիս ընդգծում էր նրանց պարզությունը,
հակիրճությունն իբրև առավելություն.—«Ես քու

слов мало, а чувства много. Настоящая мудрость
немногословна...^{*)}):

Իսկ Շեքսպիրն ասում է՝ «Համառոտությունը
հանճարի ոգին է»:

Իսահակյանի ստեղծագործության մեջ հանճարեղ
հակիրճության բարձրարվեստ նմուշներ են «Մավեն-
նայում» («Արարատի ծեր կատարին...»), «Մահը»,
«Աղբյուրի մեջ մի մարալ...»), «Երկու մանուկ՝ տղա-
աղջիկ...»), «Լորիների տակ» բանաստեղծությունները
և այլն:

Իսահակյանը մշակում, վերամշակում է երկը ի
հաշիվ նրա ծավալի, տարածության: Նա սեղմում,
խտացնում է, և դրանով ոչ միայն չի թուլանում
երկը, այլ ընդհակասակը, ուժեղանում է՝ նման զըս-
պանակի, երբ սեղմելով ավելացնում են նրա լարվա-
ծությունը, նրա ուժը: Այսպես՝ «Մահը» բանաստեղ-
ծության առաջին վարիանտի չորս տողը, ուր նկա-
րագրվում է քարվանների զողանցիլով անցնելը՝ կըր-
ճատել է, որովհետեւ բանաստեղծության երկրորդ,
հիմնական մասում աշխարհը տրորող «անտես, անձայն»
քարվանի (=մահի) պատկերն արգեն տրված է մի-
անգամայն ամբողջական:

«Անտուն գիշերներ» բանաստեղծության սկզբնա-
կան վարիանտի 19 տողը վերամշակելուց հետո մնա-
ցել է այն 9 տողը, որ ծանոթ է ամենքին: «Գերեզ-
մանս անհայտ լինի...» բանաստեղծության 16 տողից
կրճատել է ուղիղ կեսը, թողնելով այն ութ տողը, որ
մեզ հայտնի է: «Ես որ մեռնիմ ու իմ վերքից...» և
«Ես որ մեռնիմ, ինձ կթաղեք...» տարբեր բանաս-
տեղծությունները ծագել են մի բանաստեղծությու-

^{*)} М. Горький, „Избранные произведения“, т. II, стр. 614.

նից *): Ընդ որում, երկրորդ բանաստեղծության հինա-
գերորդ և վեցերորդ տողերը՝

Գերեզմանիս չորս դիմ փառին
Վայրի դաշտեր ծփծփան...

վերամշակելիս դարձել է՝

Գերեզմանիս չորս դիմ փառին
Յորեն արտերն ու ցոլան...

Եվ այդ շատ բնորոշ է ժողորդական բանաստեղծի
համար, որ սերն էլ, մահն էլ պատկերացնում է աշ-
խատանքային միջավայրում:

Նման օրինակների թիվը կարելի է բազմա-
պատկել:

Հայնի ֆրանսացի հետազոտողներից մեկը գեր-
մանացի մեծագույն լիրիկի գլխավոր և ամենանշա-
նակալից առանձնահատկություններն է համարում
պարզությունը, ժողովրդական եղանակը և ռեալիզմը:
«Առօրյա կյանքից վեցցրած այդ բառերը և դարձ-
վածքները մեզ զարմացնում են, — գրում է նա: Մեզ
թվում է, թե լսում ենք երեկվա մեր սեփական խո-
սակցությունները կամ սիրահարների գործածած ամե-
նասովորական արտահայտությունները» **):

Այդ նույնը կարելի է ասել և իսահակյանի մասին:

Նրա սկզբնական շրջանի բանաստեղծությունների
լեզվի մեջ իշխող էր բարբառը, կոմպոզիցիայի տեսա-
կետից երբեմն անարվեստ ու պրիմիտիվ լինելով,
իսահակյանի նույնիսկ պատանեկական փորձերն էլ
համակում են խոր հույզով, ջերմությամբ, անկեղծ են,
անմիջական և ճշմտրտացի: Եվ դրա մեջն է նրանց

*.) Տես «Մուրճ», 1902, № 7, էջ 144.

**) А. Лежнев, „Два поэта“ (Тютчев и Гейне), стр. 130.

հրապույթը, դրա համար են նրանք, ինչպես և ճշմարիտ արվեստի յուրաքանչյուր գործ՝ վարակիչ։ Վերջինը է, Ն. Տոլստոյը համարում էր գեղարվեստական երկի գլխավոր պայմանը։

Դիտելի է, որ Իսահակյանն իր երգերը վերահրատարակելիս հետզհետե նրանց զտել է բարբառայնությունից, էտնոգրաֆիզմից, սակայն պահել է կոլորիտը — ժողովրդական լեզվի բույրը, համն ու հոտը, պատկերավորությունը, տիպականությունը, դիպուկությունը։

Իսահակյանի երգերի ժողովրդայնությունն այնքան օրգանական է, որ դժվար է սրոշել՝ սրտեղ է Իսահակյանն ոգտագործել ժողովրդական երգը, և որտեղ՝ հնարել, ստեղծել իր սեփականը՝ ժողովրդականի ոգով ու ոճով։

Նա իր ստեղծագործությունների մեջ, օգտագործում է ոչ միայն ժողովրդական բառեր ու բառաձեերկրկնակներ (բյուր-բյուր, ծուխ-ծուխ, անուշ-անուշ, մուշ-մուշ), զույգ բառեր (ծով-ծարավ, ծափ-ծափ, ալ ու ալվան), հոմանիշ-հույնանիշ բառեր (ժեռ-լեռ, հով-զով, օրոր-շորոր), ձայնաբեկություններ, այլ և առաջնորդվում է ժողովրդական լեզվի քերականությամբ՝ խարություն չդնելով արեմայան և արեելյան բարբառների միջև (կը և ում ճյուղեր)։ Նրա լեզուն սնունդ է առնում և՛ բարբառներից, և՛ գրաբարից ու միջին հայերենից։ Իսահակյանի լեզուն մեր պոեզիայի մեջ ամենաարուստ լեզուն է։

Նրա լեզվի ուսումնասիրության ուղղությունը՝ արդեն արվում են առաջին քայլերը^{*)}։

^{*)} Ա. Կանայան—«Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն» գրքույկը՝ Արմֆանի հրատարակությամբ։

Ավ. Իսահակյանի ստեղծագործական երեակայությունը շատ հարուստ է և գերազանցապես տեսողական: Նրա մեջ ներդաշն միացած են բանաստեղծն ու նկարիչը: Ծնորհիվ նկարչական այդ ձիրքի, Իսահակյանը մի-երկու տողով արտահայտում է ոչ միայն խոր, վարակիչ, անմիջական հույզ, այլ և տալիս է գունեղ, կենդանի պատկերներ, վառվուն պեյզաժներ: Նրա ամենափոքրիկ լիրիկական բանաստեղծություններն իսկ կարելի է նկարագարդել՝ այնքան զորեղ է նրա խոսքի նկարչական ուժը:

Այստեղ ևս Իսահակյանը հարազատ է իր մեծ ուսուցչին—Ժողովրդին:

Նա գույների մեծ վարպետ է, որոնց խիստ կոնտրաստով կամ նուրբ համադրությամբ տալիս է և՛ պատկեր, և՛ տրամադրություն ու հոգեվիճակ:

Ծամերդ հյուսել
Կանգնել ես կալը,
Օրըս սկ արել՝
Կապել ես ալը

Բանաստեղծն իր անսեր յարի ունքերը նմանեցնում է դահճճի կեռ թրին, նրա կարմիր զգեստը՝ դահճի զգեստի:

Զեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր,
Ա՛խ, ես կանգնել կը դողամ,
Դու դահճի պես ալ ես հագեր—
Ալը շողբն է իմ արյան...

Եվ այդ դահճային կարմրությունը բանաստեղծն ավելի որոշ ընդգծում է ձյան սպիտակության և գիշերի սեռը ընդգծում է ձյան սպիտակության և գիշերի սեռը:

Իսահակյանը տալիս է մերժված սիրո վիշտն ու ողբերգությունը.

Քանց սարյակի թել սև,
իմ աչքերը շատ են սև.
Աչքն էլ սրտի հայելին է,
Չե՞ որ սիրոս շատ է սև:

Սակայն, եթե մերժված սիրո վիշտն ու ողբերգությունն իսահակյանն արտահայտում է սեի ու կարմըրի թանձրացումներով ու կոնտրաստով, ապա հովվերգական սերը, սիրո վայելքը նա տալիս է Սարյանական արևաշող և արևաբույր գույներով: «Ալագյազի մանիներ»-ում իսահակյանի գույները պայծառանում են, արևային լույս ու ջերմություն ստանում:

Այստեղ Սարյանական պայծառ գույների ծիծաղող խայտարգետությունն ու խաղը աշխուժություն և դիմամիկա են հաղորդում պեյզաժին.

Դու, Արագած, ալմաստ վահան
Կայծակեղեն թրելի,
Դագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:

Թիթեռներդ՝ հուր-հրեղեն
Թոչող-ճախրող ծաղիկներ,
Զառ ու զարմանք երազներեն
Պոկված ծվեն-ծվիկներ:

Կամ

Է՛յ, Մանթաշի երադ-հովիտ,
Դուն, զմուխտե օրորնց...
... Հուր-հավքերդ՝ թերեն արձաթ,
Կառւցները՝ լալ-մարջան...
... Փետուրները պայծառ ոսկով...

Մանկության նվիրած երգերում ել իսահակյանի

Վույները պայծառ են, արևով ողողված, ունեն թարմություն, հմայք ու ջերմություն.

Հուրիսում եր արեն ուրախ,
Թետն եր գնում քաղցրակարկաչ
Չորս դիս գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ:

... Զոլս դիս գարնան կանանչ թեր՝
Կանաչ հովեր, ծովեր կանանչ...
... Խայտում էյինք զմբուխտ գետում
Եվ գնդում եր արեն ուրախ...

Իսահակյանի նկարչական խոշոր ձիրքը հանդես է դալիս նաև «Արու-Լալա-Մահարի» պուեմում:

Գույների թանձրայումն ու պայծառացումն այս-
տեղ ևս տալիս է համապատասխան եփեկտ:
Հրաշալի է դիշերվա պատկերը.

Գիշերն ահարկո՞ւ և սե և հսկա մի շղիկի պես թերը փոեց,
Անծիր թերը իջան, ծածկեցին քարավանն, ուղին և գաշտերն
անօփու
... Զէին շողշողում լուսինն ու աստղեր. խավարն՝ առես թի՝
պատաժ խավարով:

Խավարի այդ թանձրացումը տեղի է տալիս, երբ
«շքեղ, լուսավառ» բարձրանում է արել, և անապատը
լցում է, ողողվում լույսի նեղեղով.

... եվ վեհ արեի ջահերի ներքո փուլեց, ծավալվեց ծիրն
անապատի,
Վառ-վառ հուրիսրաց, ինչպես տիտանյան հսկա առյուծի
ոսկեփառ մորթի

Ավ. Իսահակյանն իր բանաստեղծություններին
երաժշտականություն է հաղորդում գերազանցապես
ալիտերացիաների միջոցով: Բերենք միշերկու օրի-
նակ՝

Շըշուկ ընկավ ահա վարդի, ծաղկանց մեջ
Ծըփծփացին շուրջս մետաքս զառ փեշեր,
իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց...

Կամ՝

Առավոտուն ծով ճաճանչում
Արտուտն ուրախ ճախրում է վեր,
Ցալ ու խավար չի ճանաչում...

Եվ կամ՝

Քնքուշ լուսնի շուշան փոշին...

Իր հոգեվիճակը, իր սուբեկտիվ ապրումները երաշ-
ղի միջոցով արտահայտելը, որ նույնպես հատուկ է
ժողովրդական ստեղծագործությանը, իսահակյանն
օգտագործում է («Երազ տեսա, ձեր տան առաջ...»,
«Երազիս տեսա՝ օրոր ու շորոր...», «Երազիս մեջ լիճը
տեսա ...», «Երազիս տեսա, որ մայրս թշվառ ...» և
այլն):

Իսահակյանի մոտ երազը լոկ պատկերավորման և
արտահայտողական միջոց է: Նրա այդ երազներն ու-
նեն միանգամայն ոեալ բովանդակություն և զերծ են
կրոնականությունից և միստիցիզմից:

Այսեղից արդեն ինքնին բղխում է Իսահակյանի
գրական ուղղության հարցը:

Իսահակյանը գերազանցապես ոեալիստ է: Ռո-
մանատիպմը նրա ստեղծագործության մեջ հանդիս է
եկել ավելի որպես ձև ու ոձ, քան բովանդակություն
և աշխարհայցք: Նա սիրո նկատմամբ ունի միան-
գամայն ոեալ մոտեցում: Զարոն, Շուշիկը, «Մաճկալ
ես, բեզպած ես...» բանաստեղծության գեղջկուհին,
նույնիսկ բիբլիական կիլիթը ոեալ կանայք են: Եվ
դրանց մեջ, ոեալիստական անգերազանց ուժով դըծ-
ված է իսահակյանի գլուխ-զործոցը—Մայրը.

Մի տեղ նա մանկանն է գուրգուրում.

Ցորեկ եղավ, ոչխարն եկավ,
Ազիդ բալես քընած մընաց.
Վեր եւ բալա, անուշ ճրդա,
Տիտիկ արա, ծիծիկ մամա,
Գիծիկ-միծիկ տատիկ արա.

Հոնպատ, բալիկ քունդ անուշ,
Շաքար ու նուշ թուշդ անուշ

Մի այլ տեղ մայրն աղոթում է «ամեն հիվանդի,
հեռու ճամբորդի», և ամենից հետո միայն՝ իր պան-
դուխտ որդու համար: Կամ՝ որդուն բանտն են դրել,
մի ամբողջ տարի է լուր չունի և կոռունկներին է դի-
մում.

— «Ճան, ջան, մեսնիմ ձեր ձենիկին,
Այ կոռունկներ, նըշուններ,
Եարաբ տեսաֆ իմ բալիկին,
Եարաբ խաբար չեք բերե:

Ինչպիսի ոեալիկմով, պարզությամբ և միաժա-
նակ ինչ ջերմությամբ և հուզականությամբ է իսա-
հակյանը տվել գեղջկուհու սերը, սիրո կարուը դեպի
իր «դադրած, բեղարած» և «ծովի պես քրտնած յարը»
(«Մաճկալ հս, բեղարած ես...»):

Ժողովրդական հույզի և հոգեբանության խոր ի-
մացություն է հանդես բերել մեծ վարպետն իր այդ
կարգի բազմաթիվ բանաստեղծություններում («Բա-
րով քեղի, ազիդ յար...», «Ոխտը տարով հեռու քեղ-
նեն...», «Ժեռ, սև քարը սրտիս վրա...», «Չմեռն ան-
ցավ, եկավ գարուն...» և այլն):

Միայն ճշմարիտ մեծ արվեստագետին է հատուկ
այդպես իր եսը ձուշել ժողովրդի եսին և այդքան
հարազատությամբ ու հավատար ուժով տալ և՛ գեղջ-

կուհու ու գեղջուկի սիրո վիշտն ու կարստը, և՛ մոր
նվիրական հույզերը:

Սիրո երգերում իսահակյանի գույներն այնքան
ուեալ են, որ սիրերդական մի ամբողջ վեպ կարելի է
հյուսել: Նասիրել է ու սիրվել հեռացել է ու մոռաց-
վել («Այցի եմ գալիս քեզ մոտ ես հաճախ...», «Ա-
սում են, թե՝ դու այնպես...»). Նամակագրություն է
ունեցել որ աղջիկը ետ է պահանջում («Ինչու, ինչու
հիմա այսպես...»). Նկարագրվում է վայրը, ուր սիրո
հավատարմության ուխտ են կապել սիրահարները
(«Այս ուսուտ տակ մենք երգեցինք...»). Նկարագրվում
է և՛ աղջկա արտաքինը, որի համաձայն նկարիչը կա-
րող է գծել նրա նկարը.

Մի մըայոն աղջիկ տեսա
Ռիալտոյի կամուրջին,
Հորդ մաղերը—գետ գիշերվա,
Եվ հակինթներ՝ ականջին:

Աչքերը՝ սե—արեներ սե
Արեների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

Իսահակյանի ռեալիզմն ավելի ցայտուն հանդես
է եկել նրա եպիկական ժանրի գործերում (գեղար-
վեստական արձակ, լեգենդ, հեքիաթ, վիպերգ, առակ):

Իր «Սամա Մհեր» վիպերգում հատկապես ռեա-
լիստական մեծ ուժով տրված է Ռստանա քաղաքի
փոնապանին վերաբերող մասը, ինչպես նաև հարկա-
հավաքի տեսարանը Լաթարա հողում («Եկավ իշխանն
էն արտատեր, կիսեց տարավ ցորենէ շեղջ...»), ծեր
գուսանի հացի գովքը, պղնձի քաղաքին և որմնա-
գիրներին վերաբերող հատվածը, և այլն:

Վիպերգի ամբողջ կոմպոզիցիան, լեզուն, բառաձևերն ու ոճերը, հիպերբռլիկ պատկերները ստեղծում են ժամանակի պատրանքը—ընթերցողին փոխադրում են Մհերի ժամանակները:

Իսահակյանի պատմվածքներում («Համբերանքի չիբուխը», «Հին գյուղը», «Գյումբեցի կապիտան Ղաղարը») հանդես է բերված ժողովրդի կյանքի և կենցաղի զարմանալի իմացություն: Հերոսը (Օհան ամին) առածներով, ասացվածքներով ու առակներով տալիս է կենսափորձից հանած իր փիլիսոփայությունը: Իր այդ զրույցով, իր աֆորիզմներով Օհան ամին ուեալ, կենդանի, գունեղ խարակտեր է, գծված մեծ վարպետի վրձինով. «Իմ հացս իմ քրտնիքովս պիտի ուտեմ». «Աշխարհքից բան տանող չի եղել». «Չեռքս՝ բան, ոտքս՝ գերեզման»: Կամ՝ «Մարդը գնացական է, նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Այս, խոսքի օրինակ, էս շաքարը քցեցիր չայի մեջ՝ հալավ, կորավ, չկա, բայց չայն անուցավ: Էնպես ել լավ մարդը, կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուցնեւ: Թե չե առանց լավ մարդու աշխարքը շատ դառն է՝ օձի լեզի...»:

Ավ. Իսահակյանը մեր բազմաժանր հեղինակներից է: Իր հարուստ հույզերն ու խոները նա մարմնավորել է զրական տարբեր տեսակների մեջ—լիրիկական բանաստեղծություն, պոեմ, լեզենդ, առակ, պատմվածք, արձակ բանաստեղծություն, հեքիաթ, վեպ):

Հարկավ, Իսահակյանի ժանրային տարերքը լիրիկան է, բայց նա մեծ վարպետություն է հանդես բերել նաև մյուս ժանրերում: Գրականագիտության մեջ ցույց է տրված, որ մաքուր ժանրեր գոյություն չունեն, և ժանրերի փոխադարձ ներթափանցման

վաստերը բակմաթիվ են: Զհեռանալու համար մեր
նյութից, օրինակներ բերենք հենց Իսահակյանից:
Մի շաբաթ լիրիկական բանաստեղծությունների մեջ նա
հանդես է բերել պատմողական և նկարչական փայլուն
տաղանդ, որ էպիկական տարերք է և գալիս է ժու-
ղովրդական սակեղծագործությունից: Նկատենք, որ ժու-
ղովրդական անտունիների, հայրենների և մեր միջ-
նադարյան տաղերգուների երգերի մեջ շատերը փոք-
րիկ չափածո նովելներ ու պոեմներ են:

Ավ. Իսահակյանի «Մաճկալ ես, բեղարած ես...»
նուրբ լիրիկական բանաստեղծությունն ունի նաև
էպիկական տարրեր.

Կաթի սերը քաշել եմ,
Դրել եմ հովին սառի,
Ալ գողնոցը փռել եմ...

«Դարդը՝ սրտիս, աղքատ ու խեղճ...» բանաստեղ-
ծությունը, որ նույնպես մեծ հովականությամբ ու
լիրիզմով է շնչում, մի փոքրիկ ու գողտրիկ պոեմ է:
Եվ բնորոշ է, որ հեղինակը իր վերջին ժողովածվում
(1939 թ. հրատարակություն) այն դրել է լեզենդների
և պոեմների բաժնում՝ «Պանդուխտ որդին» վեր-
նագրով:

Սովորաբար ասվում է, թե իսահակյանը լիրիկ է
նաև իր էպիկական գործերում: Այս կարծիքը կարուտ
է վերանայման: Լիրիկական տարրեր կան նաև այն-
պիսի հոյակապ էպիկական ստեղծագործության մեջ,
ինչպիսին մեր «Սասունցի Դավիթ» է: Լիրիկական
տարրերն առկա են նույնպես իսահակյանի «Սամմա
Մհեր» վիպերգում, բայց նա իր ամբողջությամբ մի
եպիկական գլուխ—գործոց է, մի խոշոր ու ինքնա-
տիպ ստեղծագործություն:

«Մանկությունը», «Սիրո վեպը», «Հեքիաթը», «Եղիկիլը» արձակ լանաստեղծություններ են՝ լիրիկական մեծ շնչով գրված, բայց «Համբերանքի չիբուխը», «Հին գյուղը», «Գյումըեցի կապիտան Ղազարը» («Ուստա Կարո» վեպից) զեղարվեստական արձակի գլուխ-գործոցներ են, ուր արտահայտված է էպիկական հանգստություն, կա պատմողական հմայք, տրված է խարակտեր ու հոգեբանություն — Ուստա Կարոյի, կապիտան Ղազարի, Օհան ամու, Ալի Բայրամի նման ռեալ վիպական ամբողջական կերպարներ՝ տիպիկ հանդամանքներում:

Իր գործադրած բոլոր ժանրերում իսահակյանը մեծ և ինքնատիպ արվեստագետ է: Յուրաքանչյուր ժանրում նաև իր ստեղծագործական շաղախին տալիս է ավյալ ժանրի բնույթին համապատասխան ձեւ ու կերպարանք, լեռու և ոճ և դա այնպիսի վարպետությամբ ու հմտությամբ, յուրաքանչյուր ժանրի մեջ տարրեր ու առանձին, այդ ժանրին ու նյութին հարազատ ոճով ու ոգով, որ ասես դրանք տարբեր հեղինակների գործեր լինեն՝ ստեղծված հավասար վիրատուզությամբ: «Արու-Լալա-Մահարի» լիրիկական փիլոսոփիայական պոեմը միանգամայն տարբեր է «Սասմա Մհեր» վիպերգից. «Մանկություն» արձակ բանաստեղծությունը բոլորովին տարբեր «Գյումըեցի կապիտան Ղազար»-ից, «Լիլիթ»-ը հիմնովին տարբեր «Համբերանքի չիբուխից», «Մոր սիրալ» լիգենդը տարբեր «Մեր նախահայրերից»:

Տարբեր ու առանձին լինելով իրենց ստեղծագործական մեթոդներով, իրենց նյութից և ժանրային առանձնահատկություններից բղխող ոճով, ու ձևով, դրանք կապված են իրար էապես, ոգով ու իդեոլոգի-

այսի, և միմյանց հարակատ էն՝ որպես միհնույն մոք
զավակներ:

* * *

Ավ. Իսահակյանի անունը սերտորեն կապված է
մեր գրականության զարգացման վերջին հիմնամյակի
հետ:

Հովհ. Հովհաննիսյանի և Հովհ. Թումանյանի հետ
նա ստեղծեց դեմոկրատական և ազգային ձևով հայ
նոր պոեզիան, որ մեր հպարտությունն է, մեր փառքը:

Մեր գեղարվեստական խոսքի մեծ ներկայացու-
ցիչների հետ միասին նա տվեց այնպիսի գոհարներ,
որոնց նշանակությունը դուրս է գալիս հայ գրակա-
նության ազգային շրջանակներից:

Նրա երգերի ջինջ, զովացուցիչ ակունքներից խմեց
և աճեց պուտների մի նոր սերունդ, որի մեջ նշա-
նավոր դարձան Վ. Տերյանը և Շ. Կուրդինյանը:

Ավ. Իսահակյանի գրական խոսքի բարձր տեխնի-
կան, նրա նուրբ ու պայծառ արվեստը մեծ դպրոց է
այսօրվա մեր պուտների համար:

Կապիտալիստական աշխարհի բնեուային գեշերին
մեծ բանաստեղծը տառնյակ տարիներ երազեց ու ձըգ-
տեց դեպի արել՝ հասարակական-քաղաքական լավա-
գույն կարգերը: Անցնելով որոնումների հակասական
և փշալց ուղիներով, շնորհիվ ժողովրդի հետ ունե-
ցած սերտ, արյունակցական կապերի, նա ընդմիշտ
դարձավ իր մայր ժողովրդի գիրկը, եկավ սոցիալիս-
տական հայրենիք:

Եվ այժմ, որպես Սովետական հայրենիքի մեծ պո-
ետն ու քաղաքացին, նա մասնակցում է մեր երկրի
կուլտուրական շինարարության դորժին:

Դեռ չի չորացել մեծ վարպետի վրձինը: Նա իր
ստեղծագործական գանձարանից դեռ լույս աշխարհ
չի հանել իր բոլոր գանձերը: Մեր գրական հասարա-
կայնությունը, մեր ժողովուրդը գեռ շատ սպասելիք-
ներ ունեն իրենց սիրելի բանաստեղծից, նրա միշտ
պայծառ ու մէշտ դայլայլող քնարից:

1940, դեկտեմբեր

Խաչիկ
ՀՀ Ազգային
գրադարան

Պատ-խմբազիր
 Հ. Ք ր ի զ ո ր յ ա ն
 Տեխ-խմբազիր
 Ա. Ա լ ք ո ւ ն ց ա ն
 Մըբազրիչ
 Մ. Թ ո ւ մ ա ն ց ա ն


Ч. 3 № 2682. Зарегистр. № 5401

Պատվեր 816. Տիրաժ 2000

Հանձնված ե արտադրության 16/XII-1940 թ.

Ստորագրված ե տպագրության 21/XII-1940 թ.

Հայոց տէսքատի տպարան, Երևան, Լենինի, 65



(304)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042687

